Օրենսդրական տեքստը հասցեագրողը (հաղորդողը) ընդհանուր առմամբ պետությունն է: Պետության կամքը (իրավունքը) ժողովրդին են հասցնում օրենսդիրները (խորհրդարանականները, պատգամավորները): Սակայն խիստ կենցաղային է այն պատկերացումը, թե օրենսգիրները¹ Խորհրդարանում ժողովված դեմքերն են (Կոնգրես, Ազգային ժողով, Պետդումա): Օրենսդրին կարելի է դիտարկել որպես օրինագծի հեղինակի այն իմաստով, որ նրան է պատկանում օրինագծի գաղափարը, նրա մտահղացումն է: (**Օրինագծի հեղինակ** ասելով՝ նկատի ունենք այն անձին, որին պատկանում է օրենսդրական նախաձեռնությունը, այսինքն՝ նա, ով քննարկման է ներկայացնում օրենքի նախագիծը խորհրդարանի ներքին պալատին): Օրենսդրի մտահղացմանն անմիջականորեն թղթի վրա մարմնացում է տալիս իրավաբանը: Հենց իրավաբանին պետք է անվանենք **օրենքի տեքստի հեղինակ**, որը կարող է լինել ինչպես հատուկ բաժնի աշխատակից, որ հմտորեն զբաղվում է բացառապես օրենքի տեքստագրությամբ (օրինակ՝ Մեծ Բրիտանիայում), այնպես էլ գործադիր մարմնի, մասնավոր կազմակերպության անդամ կամ նույնիսկ Հարվարդի համալսարանի ուսանող, որին՝ որպես պրակտիկանտի, հանձնարարված է օրինագծի տեքստ կազմել (ինչպես երբեմն՝ ԱՄՆ-ում), կամ էլ պետական աստիճանավոր (ինչպես Ռուսաստանում): Այսպիսով՝ օրենսդրական տեքստը հասցեագրող-հաղորդողի կարգի յուրահատկությունն այն է, որ դրա հեղինակը, այսինքն՝ կազմողը, հանդես է գալիս որպես օրենսդրի (ընդհանուր առմամբ՝ պետության) և բնակչության միջնորդ:

Օրենսդրական տեքստի հասցեատեր են այն երկրի քաղաքացիները, որտեղ ընդունվում է օրենքը: Ներունակորեն այն նախատեսված է բոլոր քաղաքացիների համար, այդուհանդերձ հարկ է նկատի ունենալ, որ ամեն մի մասնավոր տեքստի բուն ընթերցողը հասարակության

¹ Չփոթել **«օրենսդիրներ»**-ի հետ. օրենսգիր = օրենք գրող:

սոսկ մի որոշակի շերտն է՝ ըստ այդ օրենքի թեմատիկայի: Սակայն շարքային քաղաքացիները հաճախ անմիջաբար չեն կարողում օրենքի տեքստը՝ իմանալու, թե իրենց՝ որպես սպառողների, որ օրենքներն են խախտվել: Որոշ դեպքերում նրանք ջանում են գտնել իրենց հարցի պատասխանը որևէ դասագրքում կամ ձեռնարկում, իրավիճակների ճնշող մասում էլ դիմում են մասնագետի, օրինակ՝ իրավաբանի, հաշվապահի կամ հարկային տեսուչի խորհրդատվությանը: Դրա համար էլ օրենսդրական տեքստի հասցեատեր են դառնում իրավաբանական մասնագիտության ներկայացուցիչները, որոնք իրենց փորձառությամբ կիրառում և մեկնաբանում են օրենքը: Վերջապես, պետք է հիշել, որ օրենսդրական տեքստի առաջին իսկ ընթերցողները խորհրդարանի անդամներն են: Հետևաբար տեքստի հեղինակը պարտավոր է նկատի ունենալ իրազեկվողների՝ վերը թվարկված իրողությունները և փորձել արդյունավետ հավասարակշռություն գտնել:

Հասցեագիրը գործակցում է հասցեատիրոջ հետ որոշակի նպատակով: Կամայական օրենսդրական տեքստի նպատակը հասարակության մեջ որոշակի տիպի հարաբերությունների կարգավորումն է, վարքի հստակ կադապարի պատվերը: Կիրառելով գործալեզվաբանության (գործաբանական լեզվաբանության) տերմինաբանությունը՝ կարելի է ասել, որ հասցեագրի հաղորդակցական դիտավորությունն այն է, որ դրվեն ինչ-ինչ շրջանակներ ու նորմեր և հարկադրեն հասցեատիրոջը հետևել այդ շրջանակներին ու նորմերին:

Օրենսդրական տեքստը իրավական նորմեր բովանդակող պաշտոնական փաստաթուղթ է, օժտված է իրավական ուժով և կիրառվում է լիազորված մարմնին համապատասխանող հատուկ արարողակարգով: Օրենսդրական տեքստի ազդեցիկ բնույթն անխուսափելիորեն իր կնիքն է դնում նրա հորինվածքի և լեզվական առանձնահատկությունների վրա:

Նախքան օրենսդրական տեքստի հորինվածքի և լեզվական առանձնահատկությունների նկարագրությունը հարկ է ուշադրություն դարձնել մերձահար մակարդակում առանձնացված «փաստարկում»

բաղադրիչի վրա: Օրենսդրական տեքստերի առումով փաստարկումն առաջին հերթին կապված է տրամաբանությանը, որի մասին վկայում են օրենսդրական տեխնիկայի մասնագետների հետազոտությունները, որոնք ավանդաբար առանձնացնում են օրենքի տրամաբանությանը ներկայացվող պահանջների առանձին խմբում: Ինչպես նշում է Ե. Կրյուկովան, «օրենսդրական փաստաթղթի տեքստը կազմելիս տրամաբանության օրենքներին հետևելը նույնքան կարևոր է, որքան գրական լեզվի կանոններին, քանի որ ամեն մի օրենքի տեքստի հիմքում ընկած են իմաստային կախվածությունները» [Крюкова, 2002: 128]: Տրամաբանության տեսանկյունից օրենսդրական տեքստում փաստարկումը նշանակում է հակասությունների բացակայություն, շարադրման հետևողականություն և հատուկ մեթոդներ՝ ընդհանուրից մասնավորը, պարզից բարդը, ընդհանուր կանոնից բացառությունը և այլն: Մյուս կողմից, փաստարկումը կապված է ճարտասանական հայեցակետին, որը ենթադրում է ուշադրության առնել հասցեատիրոջն այն բանի համար, որ հաղորդակցումն արդյունավետ լինի: Տեքստի հեղինակը պետք է ձգտի նրան, որ շարքային քաղաքացին հասկանա նրա դրույթը, ճիշտ հաշվի նստի նրա հետ և հետևի նրան: Դրանից բացի՝ անհրաժեշտ է համանման ազդեցության հասնել իրավաբանի կամ դատավորի (կամ օրենսդրական տեքստի մեկնաբանի) առումով, որոնք պարտավորված են մեկնաբանելու իրավական նորմի էությունը: «Օրինավորությունն այնքան ավելի հիմնավոր կլինի, որքան հասարակության մեջ ավելի լայնորեն արմատավորվի համոզմունքն օրենքի իրավացիության նկատմամբ: Հասկանալի է, որ և՛ օրենսդիրը, և՛ դատավորը փաստարկի դերով են հանդես գալիս (վերջինս, ակնհայտորեն, ավելի մեծ չափով), որոնք իրավունքի գործունեության առումով համոզում են այս կամ այն լսարանին ճարտասանության միջոցով» [Баранов, 2002: 123]:

Օրենսդրական տեքստի հորինվածքն ընդհանուր գծերով ենթադրում է երեք մասի առկայություն՝ *մուտք, հիմնամաս, ելք* կամ *եզրափակիչ մաս*. *մուտքին* են վերաբերում, օրինակ, նախաբանը կամ ներածականը, նպատակադրումը, կարգավորման առարկան, տերմինների

որոշարկումը. **հիմնամասում** շարադրվում են հիմնավորապես իրավական նոր նորմեր. **եզրափակիչ մասը** կամ **էջը** բովանդակում է դրույթներ օրենսդրական տեքստն ուժի մեջ մտնելու, կիրառության ոլորտի, գործողության ժամկետի և այլնի վերաբերյալ:

Իրավունքի լեզվի հետազոտությունների արդյունքների վերլուծությունը [Gibbons 2004, Tiersma 1999, Власенко 1997, Губаева 2007, Пиголкин 1998, Мушнина 2006, Прокофьев 2002, Савицкий 2006, Шепелёв 2002] թույլ է տալիս մեզ արձանագրել, որ իրավաբանական խոսույթի օրենսդրական տեքստի լեզվական առանձնահատկությունները (անկախ այն բանից՝ անգլալեզու է, հայալեզու թե ռուսալեզու) հանգում են հետևյալներին՝

- ա) շարադրանքի անդիմություն,
- բ) ասույթի անհասցեականություն, կոչականի բացակայություն,
- գ) շարադրանքի չեզոքություն՝ դրսևորված գեղարվեստական խոսքի և արտահայտչական բառապաշարի տարրերի բացակայությամբ,
- դ) արտահայտության հստակության և միանշանակության ձրգտում, հոմանշության և համանունության նվազեցման ձգտում,
- ե) տերմինավորման բարձր աստիճան,
- զ) շարադրանքի կաղապարայնության բարձր աստիճան՝ արտահայտված կայուն բառակապակցությունների՝ բառերի արարողակարգային կապակցելիության հետ ունեցած գործածությամբ,
- է) հնաբանությունների գործածության հայտնի բաժնեմաս,
- ը) բայի սահմանական ձևերի գերակշիռ գործածություն,
- թ) ներկա ժամանակի գերակշիռ գործածություն,

Օրենսդրական տեքստի վերոնշյալ առանձնահատկությունները տարաբնույթ են և բազմամակարդակ. նրանց առկայությունը թույլ է տալիս եզրակացնել, որ օրենսդրական տեքստն իր ուրույն տեղն է գրավում իրավագիտական խոսույթում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Анисимова Т. В.** (2004) Современная деловая риторика: учеб. пособие / Т. В. Анисимова, Е. Г. Гимпельсон. -2-е изд., стер.-М.: Изд-во Москов. псих.-соц. института; Воронеж: Изд-во НПО «МОДЭК»- 432 с.
2. **Баранов В. М.** (2002) Риторика и право / В. М. Баранов, А. С. Александров, Н. Д. Голев // Юрислингвистика-3: Проблемы юрислингвистической экспертизы: межвуз. сб. науч. трудов / (под ред. Н. Д. Голева).- Барнаул: Изд-во Алт. ун-та,- с. 113-124
3. **Бахтин М. М.** (1979) Эстетика словесного творчества / М. М. Бахтин.-М.: Искусство, - 424
4. **Власенко Н. А.** (1997) Язык права: монография / Н. А. Власенко.- Иркутск: Восточно-сибирское книж. изд-во, Норма-плюс -176 с.
5. **Губаева Т. В.** (2007) Язык и право. Искусство владения словом в профессиональной юридической деятельности / Т. В. Губаева , -М.: Норма, -160 с.
6. **Крюкова Е. А.** (2002) Язык формальной логики и язык законодательных актов / Е. А. Крюкова // Юрислингвистика-3: Проблемы юрислингвистической экспертизы: межвуз. сб. науч. трудов / (под ред. Н. Д. Голева).- Барнаул: Изд-во Алт. ун-та,- с. 128-132
7. **Савицкий В. М.** (2006) Язык права: дискурсивный аспект. Монография / В. М. Савицкий, Е. Г. Вышкин. – Самара: Сам. гос. арх.-строит. ун-т,-152 с.
8. **Шмелева Т. В** (2006) Жанроведение? Генристика? Генология? / Т. В. Шмелева // Речевое общение: Вестник Рос. риторической ассоциации.- Вып. 8-9 (16-17).- 121-127
9. **Gibbons J.** (2004) Language in the law / John Gibbons (et al). –New Delhi, Orient Longman Private Limited, -139 p.
10. **Tiersma P.** (1999) Legal language / Peter M. Tiersma.- University of Chicago Press.-328 p.

ԿՐՈՆԱԿԱՆ ԽՈՍՈՒՅԹԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԱՆԱԶՈՂԱԿԱՆ-ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՐՊԸ

ABSTRACT

THE COGNITIVE-PRAGMATIC ASPECT OF WORKING ON RELIGIOUS DISCOURSE

The article considers the analysis of the religious text and discourse from the viewpoint of cognitive-pragmatic approach. While working with the religious discourse the future specialists in theology apply both cognitive and meta-cognitive approaches. In this context the cognitive strategies of teaching are directed not only to the teaching of the linguistic forms and their meanings, but also to the study of the culture of the native speakers. That means the study of the symbolic system of the ethnic group, as well as the means of verbal and non-verbal communication. The role of the teacher is significant when making decisions in the processes where the discourse is analyzed both from the linguistic and social-affective viewpoint.

Key words: *cognitive-pragmatic approach, cognitive field, teaching strategy, meta-cognitive, cognitive, social-affective, Holy Book, religious discourse, pedagogical and religious discourse.*

РЕЗЮМЕ

КОГНИТИВНО-ПРАГМАТИЧЕСКИЙ АСПЕКТ РАБОТЫ С РЕЛИГИОЗНЫМ ДИСКУРСОМ

В статье рассматривается проблема анализа религиозного текста и дискурса с точки зрения когнитивно-прагматического подхода. Будущие теологи, работая над религиозным дискурсом, применяют когнитивный и метакогнитивный подходы. В этом контексте когнитивные стратегии обучения направлены не только на обучение лингвистическим формам и их значениям, но и на изучение культуры носителя языка. Это означает изучение символической системы, способов словесной и несловесной коммуникации данной этнической группы. Важна роль преподавателя в процессе принятия реше-

ний, где фактор анализа дискурса рассматривается с лингвистической и с социально-аффективной точки зрения.

Ключевые слова: *когнитивно-прагматический подход, когнитивное поле, стратегии обучения, когнитивный, мета-когнитивный, социально-аффективный, Святая Книга, религиозный дискурс, педагогический и религиозный дискурс.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում ներկայացվում է կրոնական տեքստի և խոսույթի վերլուծությունը ճանաչողական-գործաբանական մոտեցման տեսանկյունից: Կրոնական խոսույթի հետ աշխատելիս ապագա աստվածաբանները իրականացնում են ոչ միայն ճանաչողական (կոգնիտիվ), այլև վերճանաչողական (մեթակոգնիտիվ) գործառույթներ: Այդ համատեքստում ուսուցման ճանաչողական ռազմավարությունները միտված են ոչ միայն լեզվական ձևերի, նշանակությունների յուրացմանը, այլև՝ լեզվակիրների մշակույթի ուսումնասիրությանը: Դա ենթադրում է ուսումնասիրել տվյալ էթնոսի նշանաբանական համակարգը, խոսքային, ոչ խոսքային հաղորդակցության միջոցները: Կարևոր է մանկավարժի դերը որոշումներ կայացնելու գործընթացում, որտեղ խոսույթի վերլուծման գործոնը դիտարկվում է և՛ լեզվաբանական, և՛ հանրամշակութային տեսանկյուններից:

Բանալի բառեր – *ճանաչողական-գործաբանական մոտեցում, ճանաչողական ոճեր, ուսուցման ռազմավարություններ, վերճանաչողական, ճանաչողական, հանրային-հուզական, Սուրբ Գիրք, կրոնական խոսույթ, մանկավարժական և կրոնական խոսույթ:*

Ուսուցման ճանաչողական-գործաբանական մոտեցումը սովորողներին հնարավորություն է ընձեռում ուսումնական նյութը յուրացնել իրենց անմիջական մասնակցությունը բերելով ուսուցման գործընթացին: Կարևոր է որոշել ճանաչողական ոճերը՝ ոլորտի անկախություն (**field independence**) և կիսազնդեղից մեկի գերակայություն (**left- and right-brain functioning**), որոնք էլ իրենց հերթին հնարավորություն են ընձեռում ընտրել ուսուցման ճիշտ ռազմավարություն (Bruner, Goodnow, and Austin, 1995, 330): «Ռազմավարություն» հասկացությունը

նշված հեղինակը սահմանում է որպես մտածելակերպի գործողությունների ամբողջություն:

Խոսույթի հետ աշխատանքի ճանաչողական կադապարի հիմքում ընկած են տարբեր ռազմավարություններ, որոնք ներկայացնում են խոսքի ձևավորման և սերման փուլերը: Դրանք են՝ թեմայի ներմուծումը, հասկանալը, մտածողությունը, դիսկուրսը և դրա ստեղծումը (Ван Дейк, 1989: 46):

Սկզբունքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ ճանաչողական մոտեցումը ենթադրում է տեղեկատվության մշակմանը և փոխանցմանը միտված մտածելակերպ:

Ճանաչողական մոտեցման ներդրման արդյունքում Ջ. Մ. Մալին մշակեց օտար լեզվի ուսուցման 24 ռազմավարություն, որոնք էլ խմբավորեց երեք հիմնական խմբերով՝ վերճանաչողական, ճանաչողական և հանրային-հուզական (O'Malley, 1995: 45):

Հաղորդակցական մոտեցման վերլուծությունը ևս ցույց է տալիս, որ դրա մեթոդաբանական հիմքերից մեկը ճանաչողական մոտեցումն է:

Ճանաչողական մոտեցման կիրառումը ապահովում է օտար լեզվի ուսուցման անձնակենտրոն, ուսանողակենտրոն կադապար: Ճանաչողական մոտեցումը, այդուհանդերձ, հետին պլան չի մղում ուսուցման զգայական ոլորտը, անգամ եթե կիրառվում է վերճանաչողական (մեթակոգնիտիվ) ռազմավարություն:

Ճանաչողական մոտեցման տեսանկյունից նոր լույսի ներքո է ներկայանում տեքստի և խոսույթի վերլուծությունը: Ապագա աստվածաբանները կրոնական խոսույթները վերլուծում են ներակա, ոչ բացահայտ, քանի որ օտար լեզու սովորելիս պետք է հաշվի առնել խոսքի սերման իրադրությունը, ենթատեքստը, հիմնական արտալեզվական գործոնները՝ տարիքը, դիրքը, կարգավիճակը, հարաբերությունների դինամիկան:


Կրոնական խոսույթի միջոցով բառապաշարի ուսուցման գործաբանական ասպեկտը ենթադրում է հաշվի առնել խոսույթի սերման ենթատեքստը, այսինքն՝ այն հանրությունը, մշակույթը, ժամանակը, որտեղ ծավալվում է խոսքը:

Ուսումնական պայմաններում դժվար է կաղապարել այն հանրամշակութային ենթատեքստերը կամ իրադրությունները, որոնք բնորոշ են լեզվակիրներին: Սակայն մի բան է դրանք կաղապարելը, վերարտադրելը, մեկ ուրիշ բան դրանք վերլուծելը: Օտար լեզու սովորողները կամ, թե ակամա, գիտակցաբար, թե ըմբռնողաբար վերլուծում են ուսումնասիրվող խոսույթները, այսինքն՝ բացահայտում են դրանց հանրամշակութային ենթատեքստը, հաշվի առնում այս կամ այն երևույթը՝ այն հասկանալու համար:

Կարևոր է այն, թե մանկավարժներն որքանով են գիտակցում խոսութային վերլուծության դերը: Օրինակ՝ երբ ուսանողները վերլուծում են կաթոլիկ եկեղեցու ծիսակատարությունները, նկարագրում են եկեղեցու սպասավորների հանդերձանքը, ժեստերը, խոսքային վարքագիծը, աղոթքի, մեղքերի քավության, խոստովանության առանձնահատկությունները, նրանք վերլուծում են կրոնական որոշակի խոսույթներ:

Մանկավարժի դերը կարևոր է նաև որոշումներ կայացնելու գործընթացում, որտեղ խոսույթի վերլուծման գործոնը դիտարկվում է և՛ լեզվաբանական, և՛ հանրամշակութային տեսանկյուններից: Կրոնական խոսույթները հիմնականում ներտեքստեր են պարունակում, որոնք վերցրած են Սուրբ Գրքից: Օրինակ՝ հավատացյալը մեղք է գործում և չի ստանում Աստծու օրհնությունը: Այդ գաղափարը տրված է պատատի ձևով՝

Նկար 1.



Ուսանողները կարող են տարբեր մեկնաբանություններ տալ: Մակայն ներտեքստը մեկն է՝ հավատն առ Աստված լուսավորում է մարդու ճանապարհը:

Կրոնական խոսույթը ձևավորված խոսքային հմտությունն է: Այստեղ խոսք է գնում այն մասին, թե լեզվակիր եկեղեցում սպասավորները ինչպես են լեզուն գործածում առօրյայում: Ըստ Կուկի՝ խոսութային վերլուծությունն իրականացվում է ունկնդրման, ընթերցանության, խոսութային, գրավոր խոսքի ծավալման ժամանակ, որի ընթացքում լեզվակիրները գործածում են իրենց քերականական, բառային գիտելիքը (Cook, 1989: 35):

Կրոնական թեմատիկայի խոսույթները լայնորեն կիրառվում են ԶԼՄ-ներում: Դրանք կարող են բաղկացած լինել մի նկարից, գովազդային պաստառից, խառը կամ կրեոլ տեքստից: Կրոնական խոսույթ է նաև Աստվածաշունչը, այն առումով, որ մեկնաբանվում է տարբեր մարդկանց կողմից տարբեր ժամանակաշրջաններում տարբեր մոտեցումներով:

Համացանցից վերցրած տեքստերը կարելի է ներմուծել համապատասխան բառապաշարով, որը կարող է ուղղակիորեն չառնչվել եկեղեցակրոնական բառապաշարին, անգամ լինել հեռահաղորդակցական նորաբանություն: Օրինակ՝

update - make (something) more modern or up to date

upload - transfer (data) to a larger computer system

The sun and God

- UPDATED



**“What program does God use
to upload the sun every morning?”**

Սույն խոսույթը կարելի է մեկնաբանել և վերլուծել՝ օգտագործելով ոչ միայն հեռահաղորդակցական, այլև բուն կրոնական տերմիններ և հասկացություններ:

Ապագա աստվածաբանները պետք է ցանկացած կրոնական տեքստ վերլուծեն ոչ միայն լեզվի, այլև տվյալ իրավիճակի, տեղեկատվության կիրառման ենթատեքստի տեսանկյունից: Ըստ այդմ, խոսության վերլուծությունը միտված է լեզվի բաղադրամասերի ուսումնասիրությանը, որը դուրս է գալիս նախադասության կամ ասույթի շրջանակներից:

Կարևոր է այն, որ խոսության վերլուծությունն ընդունվում է որպես գիտության ճյուղ, ինքնուրույն բնագավառ:

Ըստ Օստմանի՝ խոսության վերլուծությունը տարաբնույթ մտքերի փոխանակման հիմք է ստեղծում (Ostman, 1995: 213):

Կիրառական մակարդակում խոսության վերլուծությունը նպաստավոր հող է ստեղծում կրոնական բանավոր խոսքի ուսումնասիրության համար: Պատահական չէ, որ այն լայնորեն կիրառվում է լեզվադիդակտիկայում և օտար լեզուների մեթոդիկայում: Խոսության վերլուծությունը սկզբնական շրջանում ձևավորվել է քերականության ուսուց-

ման համատեքստում, իսկ հաջորդ փուլում այն սկսեցին կիրառել տեքստի հետ աշխատելիս:

Կրոնական խոսույթը նեղ իմաստով խոսքային ակտերի ամբողջություն է, որը կիրառվում է կրոնական ոլորտում, լայն իմաստով այն որոշակի գործողությունների հավաքածու է, որն ուղղորդում է մարդուն շփվելու կրոնի հետ:

Ըստ Կարասիկի՝ կրոնական խոսույթի ձևերը որոշվում են դրանպատասկներով.

ա) աջակցություն գտնել Աստծո մոտ,

բ) մաքրել հոգին,

գ) մերձավորների շրջանում հավատի կամ քավության կոչ անել,

ե) ծիսակատարությամբ գիտակցել սեփական անձի պատկանելությունը այս կամ այն համայնքին կամ միավորին (Карасик, 2002: 45):

Կրոնական խոսույթի կենտրոնական օղակը եկեղեցին է: Գիտնականներն առանձնացնում են կրոնական շփման հետևյալ տեսակները՝

ա) շփումը եկեղեցում, որը հարուստ է կադապարություններով, աչքի է ընկնում ծիսականությամբ և թատերականացմամբ,

բ) շփումը փոքր կրոնական խմբերում (աղանդներ, տարբեր կրոնական միավորումներ),

գ) մարդու շփումը մարդու հետ՝ առանց միջնորդների, որի ամենավառ օրինակն է աղոթքը:

Կրոնական խոսույթում կարևոր դերակատարություն ունի ծեսը (Бобырева, 2008: 166):


Կրոնական խոսույթում խոսքային գործողությունները ծիսակատարության ժամանակ հետին պլան են մղվում: Ըստ Տոպորովի՝ առաջին պլան է մղվում ծեսը, որը ներկայացնում է որևէ կրոնական ակտի ժամանակ ծիսական գործողությունների ամբողջություն ու կարգերը (Топоров, 1995: 446):

Կրոնական խոսույթը կատարում է շփման հստակ գործառնություններ: Գիտնականներն առանձնացնում են կրոնական խոսույթի ընդհանուր և մասնավոր գործառնություններ: Ընդհանուր առմամբ առանձնացնում են հե-

տնյալ գործառույթները՝ ներկայացուցչական, հաղորդակցական, կոչական, արտահայտչական կամ զգայական, խոսքարկման և տեղեկատվական:


Գծապատկեր 1.

Կրոնական խոսույթի գործառույթները



Կրոնական խոսույթում առանձնացնում են առաջնային (Աստված, դրախտ, դժոխք, մեղք, հոգի, տաճար) և երկրորդային (սարսափ, օրենք, պատիժ, սեր և այլն) հասկացությունները, որոնք ներառում են աշխարհիկ ոլորտի հասկացությունները:

Կրոնական խոսույթն ըստ ոլորտների



Կրոնական խոսույթում առանձնանում են նախադեպային տեքստերը, երևույթները, անունները: Ուսուցողական նպատակներով տեքստեր ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ կրոնում շրջանառվող կրոնական անունները, որոնք որոշակի ճանաչողական-գուգորդական դաշտ են ներկայացնում՝ «հրեշտակ», «սատանա», «Աստված», «Հիսուս», «Մովսես», «Հուդա» և այլն:

Քրիստոնեական աշխարհը ներկայացնող լեզուների դարձվածաբանական ֆոնդը ներկայացնում է բազում նախադեպային արտահայտություններ, որոնք կրոնական հիմք ունեն:

• ծարավ և սովյալ - they which do hunger and thirst; those that hunger and thirst after smth.

• սեփական լուծման ունենալ - do one's bit; contribute one's share; make one's contribution to smth.

• ամեն ինչ իր ժամանակին - to every thing there is a season; everything is good in its season; all in good time; place for everything and everything in its place; new times, new songs;

- ձայն բարբառո հանապատի - a voice «crying» in the wilderness,
- Աստծո շնորհ - gift of God,
- արգելված պտուղ - forbidden fruit,

• օրախնդիր - topic of the day; news (novelty, heart-swelling) of the day; talk of the town; topical subject; urgent problem,

- փորձաքար - stumbling block,
- չարի արմատը - root of evil,
- հիմնաքար - cornerstone, pillar stone, headstone.
- հանապազօրյա հաց - our daily bread; daily meals և այլն:

Կրոնական խոսույթում առանձնանում են նախադեպային երևույթները, որոնց վերաբերում են՝

ա) տարաբնույթ հասկացությունները, օրինակ՝ «Կրոնական պատվիրաններ», «կրոնական գաղտնիքներ», «մաքրման ակտ», «զղջում», «Ծով», «Աղոթք» և այլն,

բ) ժեստեր, որոնք բնորոշ են կրոնական խոսույթին՝ «խաչակնքել»,

- sign of the cross with two fingers - «խաչակնքել երկու մատով»,
- to cross oneself - «խաչակնքվել»
- sign of the cross with three fingers - «խաչակնքել երեք մատով»,
- to bow in prayer - «գլուխ տալ»

գ) վերացական հասկացություններ՝ ապոկալիպսիս - Apocalypse; հայտնություն - the Revelation; մեղք - sin; գեհեն, սարդարամետ - the underworld, the belly of hell, inferno, Sheol; գայթակղություն - temptation և այլն (Бодырева, 2008, 166):

Ըստ Վ. Ի. Կարասիկի, կրոնական խոսույթը ներառում է նպատակներ, արժեքներ, ռազմավարություններ, ժամանակագրական տեքստեր, տարատեսակներ և ժանրեր, գրավոր և բանավոր նյութ, մասնակիցներ /գործակալներ և հաճախորդներ (Карасик, 2004: 266-276):

Ըստ նույն հեղինակի, կրոնական խոսույթի հիմնական բաղադրամաս է կազմում առարկայական ոլորտը, որը ներառում է Աստված, Հավատ և Միասնություն հասկացությունները: Կրոնական շփման մեջ այդ հասկացությունները առանցքային նշանակություն ունեն:

Կրոնական խոսույթն որպես օտար լեզուների ուսուցման միավոր ընտրելիս հաշվի ենք առնում այն հանգամանքը, որ այն եկեղեցական միջավայրին բնորոշ բառապաշարից բացի ներառում է նաև լեզվակիր-

ների ամենօրյա-խոսակցական բառապաշարը: Գաղտնիք չէ, որ եկեղեցականները փորձում են այսպես կոչված հոտի անդամների հետ շփվել մատչելի լեզվով:

Ճանաչողական-հաղորդակցական մոտեցումը հնարավորություն է ընձեռում կրոնական խոսույթի բովանդակությունը բացահայտելիս հաշվի առնել լեզվակիրների մտածելակերպը, ավանդույթները, սովորույթները, խոսքային և ոչ խոսքային հաղորդակցության կարծրատիպերը: Գիտնականները նշում են, որ կրոնական խոսույթի մասին խոսելիս անհրաժեշտ է հաշվի առնել արևմտյան մտածելակերպի յուրահատկությունը: Հուդայական ավանդույթը, որն ընդունել են քրիստոնեական աստվածաբանները, հիմնվում է խոսքի վրա, իսկ «Խոսքը Աստվածն էր» (Հովհաննես 1:1): Հուդաիզմում և իսլամում անգամ արգելված է կենդանի էակներ պատկերելը: Հուդայական խոսքային մշակույթը՝ «ականջի մշակույթը», միտումնավոր հակադրվում է հունական տեսողական՝ «աչքի մշակույթին»: Նախկինում քրիստոնեությունը, իսլամը, ամբողջ Միջնադարը հետևում էր այդ ավանդույթին: Վերածննդի դարաշրջանը նշանակում է հունական տեսողական մշակույթի վերածնունդ: Արևելյան ավանդույթը (հինդուիզմ, բուդդիզմ և այլ արևելյան եկեղեցիներ) միշտ եղել է «աչքի մշակույթ»: Այդ կրոնների բոլոր հիմնական հասկացությունները տեսողական են դարձվել (Чеп-нобров, 2007: 94-98):

Ե. Բ. Բոբիրևան համեմատում է մանկավարժական և կրոնական խոսույթները և բացահայտում դրանց ընդհանուր և տարբերակիչ կողմերը: Դրանց ընդհանրությունն այն է, որ երկուսն էլ վերաբերում են դաստիարակության ոլորտին, ծիսականացված են, գործ ունեն կոլեկտիվ գիտակցության և մարդու հոգևոր ոլորտների հետ (Бобирева, 2008: 166):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Bruner, J. S., Goodnow, J. J. and Austin, G. A.** (1995) A Study of Thinking. Transaction Publishers, P. 330
2. **Т. А. ван Дейк.** (1989) Язык. Познание. Коммуникация. М.: Прогресс, 312 с.
3. **O'Malley J. M.** (1995) Learning strategies in second language acquisition. – New York: Cambridge University Press, 276 p.
4. **Cook, Guy** (1989). Discourse. Oxford: Oxford University Press
5. **Ostman J., Virtanen T.** *Discourse analysis* // Handbook of Pragmatics: Manual Amsterdam: Benjamins, 1995: 213-272.
6. **Карасик В. И. (2002) Языковой круг: личность, концепты, дискурс:** монография. –**Волгоград:** Перемена, 477 с.
7. **Бобырева Е.В. (2008.) Религиозный дискурс: ценности и жанры // Знание. Понимание. Умение. № 1, с. 162–167.**
8. **Топоров В. Н.** (1995) Миф. Ритуал. Символ. Образ : Исследования в области мифопоэтического. М., с. 446–456.
9. **Карасик В. И.** (2004) Языковой круг: личность, концепты, дискурс / В. И. Карасик. – М.: Гнозис, 386 с.
10. **Чернобров А. А.** (2007) Специфика религиозного дискурса в лингвистике (Образование и культура России в изменяющемся мире. - Новосибирск, с. 94-98)

**ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐԸ ԱՆԳԼԵՐԵՆԻ ԽՈՐԱՅՎԱԾ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**

ABSTRACT

**THE PROBLEM OF SELECTING LEXICAL MINIMUM IN
ADVANCED ENGLISH COURSE**

The article deals with the problem of selecting lexical minimum, taking into account four types of speech activities: receptive (listening and reading), productive (speaking and writing), interactive (oral/written dialogue) and mediative (interpretation, translation). This approach allows to evaluate and re-evaluate (from new theoretical and methodological standpoints) traditional and modern principles of selecting lexical minimum, identify teaching, extra-curricular, linguistic and extralinguistic factors that directly or indirectly influence the process of selecting foreign language lexical minimum. The article emphasizes the importance of the consistent development of the methodological competence of textbook writers and teachers of foreign languages.

Key words: *advanced English course, lexical minimum, discourse, situational teaching, speech activity, interpenetration, language skills, person-oriented model, cognitive motivation, bilingualism, principles of communicative approach.*

РЕЗЮМЕ

**ПРОБЛЕМА ОТБОРА ЛЕКСИЧЕСКОГО МИНИМУМА В
УГЛУБЛЕННОМ КУРСЕ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА**

В статье рассматривается проблема отбора лексического минимума с учетом четырех видов речевой деятельности: рецептивной (аудирование и чтение), продуктивной (говорение и письмо), интерактивной (устный/письменный диалог) и медиативной (интерпретация, перевод). Такой подход позволяет с новых теоретических и методологических позиций оценить и пе-

реосмыслить традиционные и современные принципы отбора лексического минимума. Определяются те лингвистические и экстралингвистические факторы, которые прямо или косвенно влияют на процесс отбора иноязычного лексического минимума при обучении. В статье подчеркивается важность последовательного развития методической компетентности составителей учебников и преподавателей иностранных языков.

Ключевые слова: углубленный курс английского языка, минимальный словарный запас, дискурс, ситуативное обучение, речевая деятельность, взаимопроникновение, языковые навыки, личностно-ориентированная модель, познавательная мотивация, билингвизм, принципы коммуникативного подхода.

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում քննարկվում է նվազագույն բառապաշարի ընտրության խընդիրը՝ խոսքային գործունեության չորս տեսակների հաշվառմամբ. Ընկալողական (ունկնդրում և ընթերցում), արտադրողական (խոսույթ և գրույթ), ինտերակտիվ (բանավոր/գրավոր երկխոսություն), մեդիատիվ (մեկնաբանում, թարգմանում): Նման մոտեցումը հնարավորություն է ընձեռում նոր տեսական և մեթոդոլոգիական տեսանկյունից գնահատել և վերաիմաստավորել նվազագույն բառապաշարի ընտրության ավանդական և ժամանակակից սկզբունքները: Որոշակիացվել են այն ուսումնական, արտաուսումնական, լեզվական և արտալեզվական գործոնները, որոնք ուղղակիորեն կամ կողմնակի կերպով ներգործում են օտարալեզու նվազագույն բառապաշարի ընտրության գործընթացի վրա: Հոդվածում ընդգծվում է օտար լեզուների ուսուցիչների և դասագրքեր կազմողների մեթոդական իրազեկության հետևողական զարգացման կարևորությունը:

Բանալի բառեր – խորացված անգլերենի դասընթաց, նվազագույն բառապաշար, խոսույթ, իրադրային ուսուցում, խոսքային գործունեություն, փոխներթափանցում, լեզվական հմտություններ, անձնակողմնորոշիչ կադապար, ճանաչողական դրդապատճառ, երկլեզվություն, հաղորդակցական մոլորեցման սկզբունքներ:

«Անգլերենի խորացված դասընթաց» հասկացությունը նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում ավագ դպրոցում, որտեղ հստակորեն տարազատվում են հումանիտար, ընդհանուր և բնագիտական հոսքերը: Անգլերենի հոսքային ուսուցումը ավելի է խստացնում անգլերենի խորացված ուսուցման նկատմամբ առաջադրվող պահանջները: Ակնհայտ է մի բան՝ նվազագույն բառապաշարի ընտրության սկզբունքները նույնպես շարունակաբար վերանայման անհրաժեշտություն ունեն:

Մի կողմից՝ հնարավոր չէ ամբողջությամբ հրաժարվել բառապաշարի ընտրության ավանդական սկզբունքներից: Մյուս կողմից՝ դժվար է հստակորեն գնահատել ժամանակակից սկզբունքները: Անհրաժեշտ է նշել, որ թե՛ դասագրքերի հեղինակներն ու կազմողները, թե՛ անգլերեն դասավանդող ուսուցիչները պետք է ընդհանուր պատկերացում ունենան նվազագույն բառապաշարի ընտրության սկզբունքների մասին: Այստեղ խոսք է գնում նրանց մեթոդական իրազեկության շարունակական զարգացման մասին:

Հայրենական դասագրքերի հետ զուգահեռ շատ դպրոցներում դեռևս կիրառվում են արտերկյա դասագրքեր (В. Богородицкая, Л. Хрусталева, И. Верещагина, О. Афанасьева, В. Сафонова, И. Твердохлебова, Е. Соловова և ուրիշներ): Այդ դասագրքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ նվազագույն բառապաշարն ընտրված է հաղորդակցական մոտեցման սկզբունքներով:

Այս տեսակետից առանձնանում է հատկապես Ի. Վերեշչագինայի և Տ. Պրիտիկինայի հեղինակությամբ լույս տեսած անգլերենի դասագիրքը՝ բաղկացած 99 դասերից (Верещагина, Притыкина, 2000: 80, 89, 116, 207): Դրանք նկարագարող են, հարուստ նախատեքստային և հետտեքստային վարժություններով: Բառապաշարն ակտիվացնելու լավ միջոց են օգտագործված խաչբառերը: Երկխոսությունների մեծ մասը տրված է լրացման վարժանքով: Հայերենի և անգլերենի մեթոդական տիպականացման տեսանկյունից կարևոր է այն, որ մեծ տեղ են գրավում ռուսերենի հայրենագիտական բառապաշարին վերաբերող

բառեր, օրինակ՝ sputnik, samovar, matrjoshka և այլն: Բառապաշարի յուրացման տեսանկյունից կարևոր է այն, որ դասագրքում զետեղված են մեծ քանակությամբ բանաստեղծություններ՝ “Sports”, “You and your little hands” (p. 80), “My friend” (p. 89), “Jonathan Beam” (p. 116) և այլն: Տեքստերը և բառապաշարն ընտրված են ըստ թեմատիկ սկզբունքի: Բառապաշարն ամրապնդելու համար կիրառված են լրացման, փոխարինման, շղթայական և այլ վարժանքներ: Հաջողված դասերից է 58-րդը՝ մարմնի մասերի վերաբերյալ: Սկզբից աշակերտները վերհիշում են մարմնի մասերը, հետո կատարում դերային երկխոսություն՝ պատասխանելով հետևյալ հարցերին.

What do you see with?

What do you eat with?

What do you walk with?

What do you write with?

What do you think with?

Հինգերորդ վարժությամբ աշակերտներն ամրապնդում են սովորածը: Նրանք ունկնդրում են մարմնի մասերը ներկայացնող բանաստեղծություն, հետո կարդում և սովորում: Բոլոր բանաստեղծություններն ուղեկցվում են երաժշտությամբ, որը նպաստում է սովորողների հնչարտաբերական-երաժշտական մտածողության զարգացմանը:

Ձ. Սկրիվներն առաջարկում է բառապաշարի ներմուծման և ամրապնդման հիմնական ընթացակարգերը, որտեղ գիտելիքի լեզվական համակարգը ներկայանում է հնչյունաբանությամբ “Phonology”, բառապաշարով “Lexis”, քերականությամբ “Grammar”, գործառական համակարգով “Function” և խոսությամբ “Discourse”: Ավելի պարզեցված տարբերակով՝ գործառական մակարդակում ուսուցանվող օտարալեզու լեզվանյութը ներմուծվում է ավարտական մակարդակում համապատասխան խոսությամբ (ղիսկուրսով): Ինչ վերաբերում է լեզվական հմտությունների զարգացմանը միտված առաջադրանքներին, ապա հեղինակն առաջնություն է տալիս գրավոր խոսքը զարգացնող վարժություն-

ներին, որոնք նախատեսված են առանձնապես լավ սովորողների համար (Ջ. Սկրիվներ, 2005: 24):

Անգլերենի խորացված ուսուցման տեսանկյունից արժևորվում են նաև Մ. Ուեստի և Ա. Հորնբիի մոտեցումները: Դեռևս նախորդ դարի հիսունական թվականներին Մ. Ուեստը մեծ տեղ էր հատկացնում բառերի իրադրային ուսուցմանը: Նա այդ առիթով գրում է. «Բառերն իրենք ուսուցանվում են համապատասխան պահանջող իրադրություններում: Նրանք անհետք կորչում են, երբ նրանց իսկական պահանջը չկա» (West, 1951: 48): Այստեղ խոսք է գնում իրական խոսքային իրադրությունների մասին, որոնք բնորոշ են լեզվակիրներին: Անգլերենի խորացված ուսուցման տեսանկյունից կարևոր է այն, թե աշակերտները ինչպես են հասկանում դասագրքերում տեղ գտած տեքստերը, այն առումով, որ նրանք պետք է կարողանան ընտրել և վերարտադրել լեզվակիրներին բնորոշ տիպական խոսքային իրադրությունները:

Ասվածի համատեքստում կարևորվում է Ե. Պասովի մոտեցումը, քանի որ նա նվազագույն բառապաշարի ընտրության միավոր է համարում իրադրությունը, որն առանցքային հասկացություն է խոսույթներ ստեղծելու առումով: Ընդ որում, առաջին պլան մղելով «իրադրություն» հասկացությունը, Պասովը ցույց չի տալիս, թե ինչ ընթացակարգերով է հնարավոր վերարտադրել իրական խոսքային իրադրությունները: Ակնհայտ է, որ նվազագույն բառապաշարի ընտրության իրադրային և թեմատիկ սկզբունքները նրա մեկնությամբ համադրվում են, քանի որ նա առաջարկում է կազմել իրադրությունների լրիվ ցանկ: Ընդհանուր առմամբ, Ե. Պասովի առաջարկած սկզբունքների մեջ կարելի է բացահայտել որոշակի հակասություններ, քանի որ առանձնացնելով ամենակիրառական խոսքային միավորները և բաշխելով հաջորդականորեն ըստ իրադրությունների, մեթոդիստը նույնացնում է իրական և ուսումնախոսքային իրադրությունները (Пассов, 1977: 62):

Կարելի է պնդել, որ տարբեր ուսումնական պայմաններում բառապաշարի ընտրության սկզբունքները, հատկապես իրենց հարաբերակցության տեսանկյունից, ենթարկվում են բովանդակային փոփոխու-

թյունների: Տեքստը և իրադրությունը մնում են ուսուցման լեզվանյութի ընտրության հիմնական միավորներ, իսկ խոսույթն աստիճանաբար մոլվում է առաջին պլան՝ հաշվի առնելով անգլերենի խորացված ուսուցման դասընթացի հաղորդակցական բնույթը:

Անգլերենի խորացված ուսուցման տեսանկյունից կարևոր է, որ բառապաշարի ընտրության ժամանակ խոսքային իրադրություններն ունենան տեղական բնույթ, այսինքն՝ նույն իրադրությունը կարող է առաջանալ տարբեր հարալեզվաբանական գործոնների ազդեցությամբ: Ասենք, կարելի է գովաբանել նույն մարդուն և՛ տանը, և՛ դպրոցում, և՛ փոստում: Խորացված ուսուցումը հնարավորություն է ընձեռում ստեղծել այնպիսի իրադրություններ, որոնք մոտենում են իրականին: Ընդհանուր առմամբ, բառապաշարի հաղորդակցական ուսուցման կողմնակիցներն առաջարկում են «ներմուծել ավելի հաճախակի կրկնվող իրադրությունները՝ իբրև փոխհարաբերությունների համակարգեր և խոսակիցների ամենահնարավոր խոսքային վարքագծի ծրագրեր տվյալ իրադրություններում» (Пассов, 1977: 65):

Ե. Պատվն առանձնացնում է բառապաշարի իրադրային ուսուցման նորույթի սկզբունքը: Ըստ նրա՝ նորույթի սկզբունքը կարող է վերաբերել ուսուցման բոլոր երեք բաղադրամասերին՝ բովանդակությանը, հնարներիին և կազմակերպմանը (Пассов, 1977: 65):

Օտարալեզու նվագագույն բառապաշարի ընտրության իրադրային սկզբունքը կիրառելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել լեզվական և հարալեզվական գործոնները:

Շրջանառվող դասագրքերում նշված պահանջները հիմնականում հաշվի են առնված այն առումով, որ առաջարկված են իրականությանը մոտ իրադրություններ: Սակայն ասել, որ բոլոր հնարավոր արդյունավետ տարբերակներն իրականացված են, սխալ կլինի: Իրադրային քերականության տեսություններում մեծ տեղ է հատկացվում աշակերտների վառ երևակայությանը, որը խթանվում է հատկապես դրական զգայական ֆոնի ստեղծմամբ: Պակաս կարևոր չէ աշակերտների կայուն դրդապատճառների ապահովման հարցը: Մ. Ուեստը գրում է. «Ուսուց-

չի արվեստը այն է, որ կյանքի իրական իրադրությունները բխեն լեզվական պահանջմունքներից» (West, 1962: 37): Ժամանակակից մեթոդիկան ապացուցում է ճիշտ հակառակը, այն առումով, որ առաջին պլան են մղվում հաղորդակցական, մասնագիտական և հեռանկարային պահանջմունքները:

Մյուս դժվարությունն անձնակողմնորոշիչ կադապարի իրացումն է անգլերենի խորացված ուսուցման դասընթացում: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք դրական և բացասական գործոններ: Դրական գործոններից կարելի է առանձնացնել անգլերենի ուսուցման համար նախատեսված ժամաքանակը, աշակերտների մեծ մասի ճանաչողական, մասնագիտական դրդապատճառները, ուսուցիչների զգալի մասի նվիրվածությունը, պահանջկոտությունը և այլն:

Ինչ վերաբերում է մայրենի լեզվի հարցին, նշենք, որ դասի ընթացքում նրա կիրառման նկատմամբ սովորաբար երկակի մոտեցում կա. այն կամ բացառում են, կամ չարաշահում: Շատ գիտնականների կարծիքով՝ խոսքը կարգավորվում է մայրենի կամ օտար լեզվի կարգային վարքագծով: Շատ մեթոդիստներ մոռանում են, որ բացի ինտերակտիվ խոսքային գործունեության հմտություններից, անհրաժեշտ է սովորողների մոտ զարգացնել մեղիատիվ հմտություններ. նրանք պետք է կարողանան ընթերցել և վերլուծել, թարգմանել օտարալեզու բնագրերը:

Անգլերենի խորացված դասընթացն այդ հնարավորությունն ընձեռում է, քանի որ թե՛ անգլերենի ուսուցմանը հատկացվող ժամաքանակը, թե՛ առաջարկվող լեզվանյութը հիմնականում բավարարում են այդ պահանջը:

Բառապաշարի յուրացման գործընթացը պայմանավորված է նաև այն բանով, թե ինչքանով են հաշվի առնվում փոխներթափանցման առանձնահատկությունները տվյալ կրթական ոլորտում: Անգլերենի ուսուցիչները համարյա ամեն օր զբաղված են փոխներթափանցման կանխման և հաղթահարման հարցեր լուծելով: Անգլերենի հայալեզու ուսուցիչները հիմնականում տիրապետում են երեք և ավելի լեզուների:

Նրանք պիտի հաշվի առնեն փոխներթափանցման առանձնահատկությունները ոչ միայն աշակերտների, այլև իրենց խոսքում:

Փոխներթափանցմանը բնորոշ հոգեղեզվաբանական երևույթների կարևորությունը բառապաշարի ընտրության և ուսուցման հիմնախնդրի լուծման գործում տարբեր չափերով արծարծում է գտել նաև հայ մասնագետների՝ վերջին տասնամյակներին հեղինակած հայերենի և անգլերենի զուգադրական-լեզվաբանական, տիպաբանական-մեթոդական աշխատանքներում (Եղիազարյան, 1983: 55-62; Մխիթարյան, 1983: 103-112; Ֆարադյան, 1985: 203-209; Ֆարադյան, 1986: 174-183; Դանիելյան, 2007; Բարաթյան, Համբարձումյան, 1986: 31-39 և այլք):

Այսպիսով, առաջ է գալիս ոչ միայն երկլեզվության, այլև բազմալեզվության հիմնախնդիրը, քանի որ հայ աշակերտների գերակշիռ մասն ինչպես ընկալողական, այնպես էլ վերարտադրողական մակարդակներում ռուսերենին բավականին լավ է տիրապետում:

Ընդհանուր առմամբ, փոխներթափանցման պատճառ կարող են հանդիսանալ ոչ միայն վատ, այլև լավ յուրացված բառերը: Ավելին, փոխներթափանցման պատճառ կարող են հանդիսանալ նաև իրադրային բառիմաստները, տարբեր կարգի և բնույթի դարձվածները և կայուն բառակապակցությունները: Այդ հանգամանքը նույնպես անհրաժեշտ է հաշվի առնել նվազագույն բառապաշարի ընտրություն իրականացնելիս:

Հայերենի և անգլերենի բառերի իմաստակառուցվածքային զուգադրական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել բառային փոխներթափանցման համապատասխան ոլորտները: Անգլերենի նվազագույն բառապաշարի սկզբունքներն ընտրելիս թե՛ դասագրքերի հեղինակները, թե՛ անգլերենի ուսուցիչները պիտի հաշվի առնեն ինչպես դրական, այնպես էլ բացասական փոխազդեցության առանձնահատկությունները: Ակնհայտ է, որ հայերեն-անգլերեն զուգադրական վերլուծության տեսանկյունից համապատասխան բառապաշարի ընտրությունը պահանջում է հաշվի առնել փոխներթափանց-

ման բոլոր դրսևորումները՝ մշակութային, միջմշակութային, գործաբանական և այլն:

Օտարալեզու նվագագույն բառապաշարի սկզբունքների ընտրությունն իրականացվում է խոսքային գործունեության ընկալողական, արտադրողական, ինտերակտիվ և մեդիատիվ հմտությունների զարգացման մակարդակում: Ամեն մի մակարդակում փոխվում է նվագագույն բառապաշարի ընտրության սկզբունքների նկատմամբ վերաբերմունքը: Օտարալեզու խոսքային գործունեության ընկալողական մակարդակում իրենց այժմեականությունը չեն կորցրել նվագագույն բառապաշարի ընտրության ավանդական սկզբունքները:

Օտարալեզու խոսքային գործունեության ինտերակտիվ հմտությունների (մենախոսություն, երկխոսություն), զարգացման համար արդյունավետ են հաղորդակցական մոտեցման սկզբունքները: Քննարկվող հիմնախնդիրը ավելի է բարդանում, երբ փորձ է արվում առաջարկել օտարալեզու նվագագույն բառապաշարի ընտրության սկզբունքներ խոսքային գործունեության մեդիատիվ հմտությունների (վերլուծություն, թարգմանություն) զարգացման մակարդակում, քանի որ անհրաժեշտություն է առաջանում մշակել բառային և այլ բնույթի փոխներթափանցման հաղթահարման վերձանաչողական ռազմավարություններ, երբ սովորողները աստիճանաբար յուրացնում են օտարալեզու բնագրերի և իրական խոսքային իրադրությունների վերլուծության տարրերը գուգադրական-համեմատական մակարդակում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Դանիելյան Գ. Լ.** (2007) Լեզվաբանական իրազեկության զարգացման հիմնախնդիրը անգլերենի բանասիրական ուղղվածության դասընթացում, / թեկն. ատենախոսություն, Երևան:
2. **Баратян Н. Р., Амбарцумян Н. В.** (1986) Лексические трудности студентов-армян в свете проблемы билингвизма // Օտար լեզուներ: Արտասահմանյան գրականություն. № 5, էջեր 31-39:

3. **Верецагина И. Н., Притыкина Т. А.** (2000) Английский язык: учебник для II класса с углубленным изучением английского языка лицеев, гимназий и колледжей: М.: "Просвещение".
4. **Егизарян А. В.** (1983) Лингвистические основы методической типологии фразеологизмов и ее значение для обучения приемам их перевода // Օտար լեզուներ: Արտասահմանյան գրականություն. № 2, Երևան, էջեր 55-62:
5. **Мхитарян Е. С.** (1983) К методике сопоставительного изучения языков // Օտար լեզուներ: Արտասահմանյան գրականություն. № 2, էջեր 103-112:
6. **Пассов Е. И.** (1977) Основы методики обучения иностранным языкам, М.
7. **Фарадян Н. К.** (1986) Изучение типичных грамматических ошибок студентов как способ оптимизации обучения устной речи // Օտար լեզուներ: Արտասահմանյան գրականություն. № 2, էջեր 174-183:
8. **Фарадян Н. К.** (1985) К вопросу об интерпретации в процессе усвоения английских видовременных форм в армянском языковом вузе // Օտար լեզուներ: Արտասահմանյան գրականություն. № 9, էջեր 203- 209:
9. **Scrivener J.** (2005) Learning Teaching, Oxford: Macmillan Education (2nd Edition).
10. **West M.** (1951) Caternizing. English Language Teaching, vol. V.
11. **West M.** (1962) Teaching in Difficult Circumstances, London.

ՀԵՔԻԱԹԸ ՈՐՊԵՍ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

ABSTRACT

FAIRY- TALE AS A MEANS OF CULTURAL DIALOGUE

The present article examines fairy-tales as a means of revealing two different cultures. As a result of a semiotic analysis of the Armenian and French folktales, the peculiarities of national linguistic mentalities are uncovered. Fairy-tales are the manifestations of the national reality changed by the society affiliating to that particular culture.

Key words: *opening and closing formulae, numerical mystery, color symbolism.*

РЕЗЮМЕ

СКАЗКА КАК СРЕДСТВО ДИАЛОГА КУЛЬТУР

Данная статья рассматривает сказку как предмет исследования двух разных культур. Сказка – это носитель определенной культуры, отражение национальной действительности и духа. Именно в сказках отражаются особенности общества и традиций. В результате семиотического анализа армянских и французских сказок проявляются определенные соответствия языкового мышления данных народов.

Ключевые слова: *типы зачинов и концовок, цифровая мистика, цветовая символика.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածում փորձ է արվում զուգադրության միջոցով ուսումնասիրել հայկական և ֆրանսիական հեքիաթների կառուցվածքաբանական և նշանագիտական որոշ առանձնահատկություններ: Միևնույն պատում-հեքիաթի տարբեր մշակումների ուսումնասիրությունն ու վերլուծությունը թույլ է տալիս

առանձնացնել կառուցվածքային, իմաստաբանական, նշանագիտական այն բաղադրիչները, որոնց հիման վրա ձևավորվում են ազգային և համամարդկային տարրերը, մշակութային նկարագիրն ու միջմշակութային կապերը:

Բանալի բառեր – բացող և փակող բանաձևեր, թվային խորհրդանիշ, գունային խորհրդանշայնություն:

Հեքիաթի ժանրն ուսումնասիրության լայն դաշտ է տարբեր գիտակարգերի համար, ինչպիսիք են՝ ընդհանուր բանասիրությունը, գրականագիտությունը, լեզվաբանությունը, ազգագրությունը, էթնոհոգեբանությունը և այլն: Հեքիաթը՝ խրատելու, կրթելու և տեղեկացնելու իր անժխտելի գլխավոր գործառնությունը, հասցեագրված է մանուկներին, և չնայած իր պարզ, ճշգրիտ ու նաև պատկերավոր լեզվին, այն շատ բազմաշերտ ու խորիմաստ բնույթ ունի: *Այն ազգային մշակույթն ու հոգեբանությունը բացահայտելու լավագույն տարբերակներից մեկն է:*

Հեքիաթը որպես մշակութային բացահայտման մեթոդ մանկան բարոյամանկավարժական դաստիարակության կարևոր հիմքերից է: Հենց հեքիաթի միջոցով է երեխան տեսնում **բարի** ու **չար** կերպարներին, լսում հետաքրքրաշարժ պատմություններ, արկածներով լի սխրանքներ և կամաց-կամաց ծնունդ տալիս իր մեջ այդ ամենից դաս առնելու ունակությանը: Նա գիտակցում է, որ պետք է նմանվի բարի ու դրական հերոսներին: «Մա արդեն վկայում է այն մասին, որ մանուկունկնդիրն ակամայից դառնում է իր մշակույթի կրողը»: (Propp, 2005: 25)

Յուրաքանչյուր հեքիաթ-պատում զարգացնում է իր սյուժեն և բարոյախոսությունը՝ համապատասխանեցնելով այն իր ազգային մտածողությանը: Այս փաստով են պայմանավորված միջմշակութային այն առանձնահատկությունները, որոնք կարելի է նկատել տարբեր ժողովուրդների պատկանող հեքիաթների բազմակողմ գուգադրական վերլուծության շնորհիվ: Այն յուրաքանչյուր ազգային մտածողության գրավոր կամ բանավոր փոխադրությունն է՝ փոփոխված տվյալ մշակույթը կրող ներկայացուցիչների չափանիշներով: «Հեքիաթը՝ որպես երևակայության թռիչքով ստեղծված մի աշխարհ, որտեղ ազատ միահյուսվում

են իրական և անիրական կերպարները, սովորականն ու արտառոցը, համարվում է ստեղծագործական մտածողության յուրահատուկ ասպարեզ»։ (Ղանալանյան, 1977: 22)

Մեր ուսումնասիրության նպատակը հայ և ֆրանսիական հեքիաթների զուգադրական վերլուծության շնորհիվ նրանց համընդհանուր համամարդկային կողմերի և նշանագիտական առանձնահատկությունների պարզաբանումն է, այդ թվում առանձնացնելով նաև կառուցվածքայինն ու թեմատիկը։

Հեքիաթի կառուցվածքային և թեմատիկ առանձնահատկությունները

Ընդհանուր առմամբ հեքիաթներն ունեն որոշակի կառուցվածք։ Բանահյուսական ավանդության մեջ՝ ժանրային այլ տեսակների կողքին (առակ, էպոս, լեգենդ, բալլադ, պատմվածք, վիպակ, նովել և այլն) հեքիաթն ունի իր ուրույն տեղը՝ կառուցվածքային և թեմատիկ հստակ ընդգծումներով։ Ֆրանսիացի ազգագրագետ և հեքիաթագիր Լ. Տենեզն առաջարկում է հեքիաթների թեմատիկ դասակարգման հետևյալ երկու ընդհանուր տիպերը՝ *հրաշապատում* և *իրապատում* հեքիաթներ և մի շարք ենթատիպեր, ինչպես օրինակ՝ *կենդանապատում*, *կենցաղային*, *պատմական*, *կախարդական*, *լեգենդ-պատում* և այլն։ (Tenèze, 2010: 82)։ Հետևաբար թվարկված տեսակները զարգանում են թեմատիկ հիմքի վրա։ Օրինակ՝ հերոս-կենդանիների կախարդական սխրանքներն ու անիրական հաղթանակները, բնականաբար, կդասակարգվեն հրաշապատում կարգի՝ կենդանապատում ենթատիպի մեջ։

Հայկական հեքիաթներին բնորոշ հիմնական տեսակներն են՝ արձակ ոճով գրված իրապատում և հրաշապատում կարգերը։ Հանդիպում ենք կենցաղային և պատմական բնույթի այլ ենթատիպեր։ Ֆրանսիական հեքիաթները, տիպերի և ենթատիպերի ընդգրկման առումով, ավելի հարուստ են։ Հանգավորված և արձակ հրաշապատում և իրապատում կարգերից գատ, տարբերակում ենք նաև ծաղրական, հումորային, կենդանապատում, կրոնական թեմաներով և լեգենդ-պատում ենթատիպերը։

Դարեր շարունակ, այս երկու մշակույթներն էլ իրենց բանավոր ավանդության մեջ են ամփոփել պատմության գիրկն անցած հերոսական սխրանքներն ու հաղթարշավները, և հեքիաթներում հանդիպող բազմաթիվ հերոսներ ու իրադարձություններ պատահական անուններ չեն կրում: 1. Հայկական ազգային հեքիաթների վերամշակման առաջին փորձերն արվել են **Ղ. Աղայանի** և **Ռ. Պատկանյանի** կողմից (1860-ականներից սկսած, 19-րդ դար): Ժամանակագրորեն մի փոքր ավելի ուշ (20-րդ դարի առաջին կեսից սկսած) ներկայացված են «**Հ. Օրբելու** մշակմամբ հայտնի հայ ժողովրդական հեքիաթների տասներկու հատորները, որոնք ներառելով Պատմական Հայաստանի գրեթե բոլոր շրջանները, մշակութային հրաշալի կոթողներ են՝ ամփոփված գրավոր բանահյուսական ժանրում» (Աղայան, 2005: 18) Մանրամասնորեն ներկայացված են աշխատավոր հայ ժողովրդի կենսակերպը, բարքերն ու ավանդույթները: 2. Ֆրանսիական հեքիաթի ժանրի մասին առաջին վերլուծական աշխատություններն արտացոլվել են նախ՝ անվանի ազգագրագետ և հեքիաթագիր **Ժ. Մասինիոնի** (1910-ականներ, 20-րդ դար), ապա նոր՝ **Մ. Լ. Տենեզի** և **Պ. Դըլառյուի** (1950-ականներ, 20-րդ դարի երկրորդ կես) աշխատություններում:

Հեքիաթի նշանագիտական առանձնահատկությունները

Կառուցվածքային և նշանագիտական առանձնահատկությունների մասին մանրամասն կարելի է կարդալ Ֆ. Միլոգոյի «Հեքիաթների նշանագիտությունը» աշխատության մեջ, ուր նա, վերլուծելով աֆրիկյան ազգային հեքիաթները, առաջարկում է հեքիաթի կառուցվածքի վերլուծության հետևյալ նշանագիտական բաղադրիչները՝

1. *Տարածական ասպեկտ* – Գործողության տեղի բնորոշիչ
2. *Ժամանակային ասպեկտ* – Գործողության ժամանակի բնորոշիչ
3. *Գործող անձի ասպեկտ* – Գործողությունն իրականացնողի բնորոշիչ

Եթե հայ և ֆրանսիական հեքիաթները վերլուծենք այս տեսանկյունից, ապա կարող ենք առանձնացնել հետևյալ բնորոշ գծերը:

Տարածական ասպեկտ. 1. Հայկական իրականության մեջ հիմնական նկարագրվող տեսարանը գյուղական բնակարան է՝ իր վեհաշուք բարձունքներով ու մեկ հարկանի կավապատ շենքերով: Իրենց ամենօրյա ապրուստը մարդիկ հոգում են լավաշ թխելով, գորգ հյուսելով, թել մանելով, մեղուներ բուծելով: Նրանց պարզ կենցաղի անբաժան մասն են հինավուրց վանքերի շուրջ ընթացող տոնախմբություններն ու ծեսերը, որոնք կատարվում են ժողովրդական երաժշտական գործիքների ուղեկցությամբ: Եվ ինչ հրաշապատումներ էլ, որ հորինվեն, միևնույնն է, այդ հեքիաթներում առօրյա գյուղական կենցաղը միշտ ներկա է՝ որպես մարդկային գիտակցությունը ձևավորող միջավայր: Գործողության կատարման հիմնական վայրերն են՝ *ախպրին մոտ, անտառում, քաղաքին մեջ, թագավորանիստումը, ծովից ծով, փանջարմային (պատուհան) տակ, նախրումը, դես-դեն, պալատեն, դաշտին մեջ, երիցների երկիրը, մի ծով հովիտներ, պատի մի դիհի մեջ, բաղնիքի տակը, նեքսում, վիրևում, հավուզի կուշտը, չորս դիհը, բոթնոցի մեջ, դրբա սարը, ջաղացին քովը, ասդին և այլն:* 2. Ֆրանսիական հեքիաթները հիմնականում ծավալվում են անտառներում և հարուստ ու պերճաշուք դղյակներում: Հեքիաթագիրը, նկարագրելով այդ շքեղ պալատները, խոսելով թագավորների, պալատականների ցուփ ու շվայտ կյանքի մասին, չի մոռանում նկարագրել նաև աղքատ ժողովրդի կենսակերպն ու բնակության վայրը: «Այս չափորոշիչը շեշտում է բազմաթիվ առարկաների առկայությունը, որոնք խորհրդանշում են այս կամ այն վայրը» (Courtés, 2006: 165): Գործողության կատարման հիմնական վայրերն են՝ *գյուղեր, թագավորություններ, ջրաղացի մոտ, անտառի խորքում, ձեղնահարկում, սոճիների տակ, այդտեղից շատ հեռու մի գյուղում, ագարակում և այլն:*

Ժամանակային ասպեկտ. Այս բաղադրիչի միջոցով որոշվում են և՛ հեքիաթում ծավալվող գործողությունների ժամանակային սահմանները, և՛ քերականական այն ժամանակաձևերը, որոնցով դրանք արտահայտված են: Հայ և ֆրանսիական ժողովուրդների հեքիաթները համադրելիս, տեսնում ենք, որ երկու մշակույթներում էլ հեքիաթ-պատումի հիմնական ժամանակաձևը պատմողական ներկան է կամ ան-

ցյալ կատարյալը: Հայտնի է, որ ֆրանսերենը կատարված-ավարտված գործողության համար ունի երկու ժամանակաձև՝ վաղակատար ներկա (le passé composé) և անցյալ կատարյալ (le passé simple): Ֆրանսիական հեքիաթներում գլխավորապես օգտագործվում է անցյալ կատարյալ ժամանակաձևը՝ զուգադրվելով պատմողական ներկայի հետ: Օրինակ՝ *Il etait une fois...* Հայկական հեքիաթները մեծամասամբ սկսվում են պատմողական ներկայով, այն ինչ չի կարելի հանդիպել ֆրանսիական հեքիաթներում: Օրինակ՝ Լինում է չի լինում և այլն:

Գործող անձի ասպեկտ. 1. Հեքիաթն այս տեսանկյունից վերլուծելիս, կարողանում ենք տեսակավորել կերպարներին՝ առանձնացնելով նրանց առաջնային և երկրորդական դերերը: Հայկական հեքիաթներում մեծ տեղ է հատկացված ինչպես մարդկանց, այնպես էլ կենդանիներին: Ներկայացված են տարբեր խավեր, բայց հիմնականում իշխում են արական սեռի ներկայացուցիչներ գյուղացիներն ու թագավորները: Հաճախ հանդիպում ենք *գլխավոր հերոսների դերում*՝ տղա-հերոս, աղջիկ, ժողովուրդ, թագավոր, պառավ, ծերուկ, զգիր, նազիր, վեզիր, քավոր, հարևան և այլն, *երկրորդական հերոսների դերում*՝ դարավուլներ, երիցներ, իմաստուններ, կախարդներ, դևեր, դերվիշ, ուստա, սով-դաքյար, առևտրական, իսկ կենդանապատում հեքիաթներում՝ *խոնոր* եզներ, անասուններ, շուն, կատու, ձի, թռչուն, մուկ, այծ, օձ, էշ: 2. Ֆրանսիական հեքիաթներում առաջին տեղը զբաղեցնում են կենդանապատում հեքիաթները (աղվես, արջ, աքաղաղ, գայլ, խոզ, էշ, թիթեռներ, մեղուներ), ապա ներկայացված են ինչպես բարձրաշխարհիկ, այնպես էլ ցածր խավի ներկայացուցիչների մասին պատմող հեքիաթները: Գլխավոր կերպարներն են՝ փոքրիկ տղան, աղջիկը, թագավորն ու արքայադուստրը, տատիկն ու մայրիկը, իսկ երկրորդական դերերում՝ փայտահատները, հրեշտակները, կախարդներն ու փերիները:

Փորձենք մանրամասնորեն ներկայացնել հաջորդ կարևորագույն նշանագիտական բաղադրիչները, որոնց տիրույթում մշակույթների լուսաբանման գործընթացն ավելի ցայտուն է դառնում: Դրանք են՝

1. Բացող և փակող բանաձևեր

2. Գունային խորհրդանիշ

3. Թվային խորհրդանշան:

1. Բացող և փակող բանաձևեր

«Նշանագիտական վերլուծության մեջ առանձնահատուկ տեղ է հատկացված հեքիաթը **բացող և փակող բանաձևերին**, որոնք իմաստաստեղծ դեր կատարելով, ընթերցողին ներկայացնում են լրացուցիչ տեղեկություն, ընդգծելով այս ժանրին վերաբերող ազգային յուրահատկությունը» (Millogo, 2009: 21): Փակող բանաձևի նպատակը հեքիաթի ողջ գաղափարախոսությունն արտահայտելն է: Ներկայացնենք ինչպես բացող, այնպես էլ փակող գրաձևերի օրինակներ: Հայկական տեքստերում հանդիպում ենք.

Լինում է չի լինում, կար-չկար, ժուկով-ժամանակով կամ երկնքից երեք խնձոր վեր ընկավ, թագավորն ապրած կենա, նրանք հասան իրենց մուրազին դուք էլ հասնեք ձեր մուրազին:

Ինչ վերաբերում է ֆրանսիական այս բանաձևերին, ասենք, որ ընդհանուր առմամբ դրանք ավարտվում են հանգավորված **բարոյախոսությամբ**:

Il etait une fois, Il etait une belle lurette, un beau jour du printemps etc... ինչպես նաև՝ *La curiosité malgré tous ses attrait, Coute souvent bien des regrets, on en voit les jours mille exemples paraître. C'est, n'en déplaie au sexe, un plaisir bien léger, dès qu'on le prend il cesse d'être et toujours il coute trop cher:*

Մեր քննարկելիք հեքիաթների դեպքում ունենք բացահայտ տարբեր բանաձևեր: Շ. Պերոն սկսում է ֆրանսիական տիպիկ սկսվածք-նախաբանով՝ մատնանշելով ժամանակային և տարածական բնորոշիչները: *Il etait une fois une petite fille de village:* Հայկական տեքստում ամբողջովին այլ պատկեր է՝ *Ատենոք գեղացի աղջիկ մը կար:* «Արդեն իսկ առաջին իմաստահաղորդիչ տողը տարբերակում է հեքիաթների ոճային և լեզվամտածողական հիմքերը» (Զիվանյան, 2010: 56):

Հեքիաթի համեմատվող տարբերակները, հայ և ֆրանսիական բանահյուսության մեջ, կերպարների, բարոյախոսության և համատեքստի առումով մի շարք ընդհանրություններ են ի հայտ բերում, բայց այուժեի և բարոյախոսության ընթացքը զարգացնում են լիովին տարբեր ուղղու-

թյուններով: Հեքիաթի վերջում Շ. Պերոն դիմում է բոլոր մանուկներին, հատկապես խոսքն ուղղելով փոքրիկ աղջիկներին, ովքեր վտանգի մեջ են ընկնում անծանոթ մարդկանց լսելով: Նա զգուշացնում է, որ շատերը, գայլի դիմակի տակ հանդես գալով, օգտագործում են մարդկանց միամտությունն ու անկեղծությունը: Այստեղ շեշտը դրված է աղջիկ և տղամարդ հարաբերության վրա, ենթատեքստն ուղղորդում է հենց այնտեղ. պետք չէ մոռանալ, որ այս պատումն ի սկզբանե նախատեսված է եղել մեծահասակների համար, ինչի վառ ապացույցը Նիելր շրջանի մշակման ողջ գաղափարախոսությունն է: On voit ici que de jeunes enfants, surtout de jeunes filles belles, bien faites, et gentilles, font très mal d'écouter toute sorte de gens, et que ce n'est pas chose étrange, s'il en est tant que le loup mange. Je dis le Loup, car tous les Loups ne sont pas de la même sorte, il en est d'une humeur accorte, sans bruit, sans fiel et sans courroux, qui privés, complaisants et doux, suivent les jeunes demoiselles jusque dans les maisons, jusque dans les ruelles, mais hélas! Qui ne sait que ces Loups doux, de tous les loups sont les plus dangereux. Այս հատկանիշը ևս փաստում է մշակույթներում առկա գաղափարային տարբերությունը: Հայկական վերջաբանում՝ Հ. Պարոնյանի առաջարկած «Կարմիր Վարդուկ» տարբերակում, հասցեատերերը փոքրիկ տղաներն են կամ պարզապես երեխաները, ովքեր խրատներ լսելու կարիք չատ ունեն: *Թող խրատ առնեն պզտիկ տղայք այս կարմիր վարդուկին զխուն եկածեն: Կրնա ըլլալ օր մը պատահին ասանկ չար գայլին պես մեկուն, որ կեղծավորությամբ, անուշ լեզու մը գործածելով որոգայթի մեջ ձգե զիրենք:*

2. Գունային խորհրդանիշ

Հետաքրքրական է հատկապես այն հանգամանքը, որ հեքիաթը, բացի վերոհիշյալ նշանագիտական բաղադրիչներից, ունի նաև **գունային խորհրդանշանության** բաղադրիչը, որն էլ իր հերթին հնարավորություն է տալիս մեկնել այնպիսի նուրբ ենթիմաստներ, որոնք կաղապարված են հիմնական իմաստների ներքո: Օրինակ, երբ ծանոթանում ենք «*Կարմիր գլխարկ*» հեքիաթի բազմաբնույթ մշակումներին՝ ներկայացված տարբեր ազգերի հեղինակների կողմից, միանգամից նկատում ենք ազգամտածողությանը բնորոշ առանձնահատկություններ: Ֆրանսիական տարբերակում հայտնի է **Նիելր** քաղաքի (Բուրգունդիա շրջ-

ջան) մշակումը, որն էապես տարբերվում է հայկական կամ գերմանական մշակումներից, և հավանաբար հայ մանուկը երբեք չի ըմբռնի ֆրանսիական պատումի բարոյախոսությունը: Քննելով կարմիր բառի պատմականորեն ձևավորված իմաստային շերտերը հայերենում, կարելի է եզրակացնել, որ այն ունի կյանքի, հաղթանակի, արյան, կրակի, սիրո, իսկ ֆրանսերենում՝ տաքության, իշխանության, զայրույթի, տոնի, գեղեցիկի և մարմնական սիրո ու կրքի խորհրդանիշը: Վերնագրերի ընտրությունը նույնպես պատահական չէ: Եթե, փոխտեքստայնության դաշտում, համեմատենք Հակոբ Պարոնյանի կողմից արևմտահայերենով մշակված հայկական տարբերակը՝ «Կարմիր Վարդուկը», Նիելրի տարբերակի հետ, ապա ի հայտ կգան իմաստային էական տարբերություններ. սյուժեի թեմատիկ ուղղվածությունը բացառապես տարբեր է երկու «նույն» հեքիաթներում: Իսկ թե ինչու է գլխարկը փոխարինված վարդուկ բառով, բացատրվում է հենց կերպարի միջոցով. եթե ֆրանսիական տարբերակում տատիկը թոռնիկին ծննդյան առիթով կարմիր գլխարկ է նվիրում, ապա հայկականում փոքրիկ աղջնակին կարմիր վարդուկ էին կանչում, քանի որ նա պաշտում էր վարդերը: *Կարմիր վարդուկ կը կանչեին որ կարմիր վարդի խենթ ըլլալով միշտ գլուխը կարմիր վարդ մը կը խոթեր:* Գերտեքստայնության տեսանկյունից համեմատելիս, հեքիաթների միջև առկա ընդհանրություններն ակնհայտորեն շատանում են:

Այս դեպքում, մի կողմից վերցնում ենք Հ. Թումանյանի թարգմանություն–փոխադրությունը, մյուս կողմից էլ Շ. Պերոյի մշակումը: Սյուժետ–կերպարային համընդհանուր գիծը երկուսում էլ պահպանված է:

Ավելացնենք նաև, որ գունային համեմատությունները, բացի ընդհանուր, անգամ համամշակութային իմաստից, ունեն ավելի նեղ, առանձնահատուկ նշանակություններ, որոնք բացահայտվում–ձևավորվում են յուրաքանչյուր առանձին տեքստում: «Առավել խորքային ընթերցումը թույլ է տալիս հիմնական իմաստի մեջ բացահայտել գույներով պայմանավորված խորհրդանշական իմաստների նոր ենթաշերտեր» (Զիվանյան, 2010: 34):

3. ԹՎԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՉ

Վերջին ուշագրավ երևույթը **թվերի խորհրդանշայնությունն** է, որի հիմքում ընկած են համամարդկային բացահայտողական տարրեր: «Ընդհանուր առմամբ, թվային խորհրդանիշը հիմնված է վաղեմի կրոնական հավատալիքների վրա» (Զիվանյան, 2010: 45): Ֆրանսիական և հայկական տեքստերում ամենահաճախ հանդիպող թվերը **երեքն** ու **յոթն** են: Փորձենք մասնակիորեն տալ թվերի խորհրդանշական իմաստները: Երեքը համարվում է հիմնային թվանշան և արտահայտում հոգևորն ու մտայինը Տիրոջ ու մարդու մեջ: Սա Սուրբ Երրորդության գաղափարն է, Աստծո տված երեք ժամանակների՝ ներկայի, անցյալի, ապառնիի արտահայտումը: Հեքիաթներում այն հանդես է գալիս հատկապես աստվածային, կախարդական իմաստներով: Երկու ժողովուրդների մոտ էլ այն հանդիպում է, օրինակ, հայկական իրականության մեջ՝ *Երկնքից երեք խնձոր է ընկնում, թագավորը միշտ ունենում է երեք տղա կամ աղջիկ, երեք հաղթական ուղիներ են բացվում հերոսների առջև, պետք է հաղթահարել երեք փորձություններ՝ սերը նվաճելու համար և այլն*: Նույնը կարող ենք ասել նաև ֆրանսիական հեքիաթների մասին՝ *երեք մաղթանքներ են հնչում, երեք գլխանի վիշապներ կան, երեք կախարդական փերիներ են պտտվում, գործողությունները կատարել եռակի անգամ*, որ դրանք իրականանան և այլն: Ինչ վերաբերում է կախարդական յոթ թվին, դա, նախ և առաջ, արարման խորհրդանիշն է, ապա նաև շաբաթվա յոթ օրերի, մոլորակների, ծիածանի գույների, երաժշտական նոտաների խորհրդանիշն է: Այն աշխարհի ստեղծման յոթ օրերն է խորհրդանշում: Բոլորիս քաջ հայտնի օրինակը, որ կարելի է հանդիպել հայկական հեքիաթներում, *յոթ օր յոթ գիշեր* հարսանիքների տոնախմբությունն է: Իսկ ֆրանսիական հրաշապատում հեքիաթում նկարագրված են *յոթգլխանի վիշապներ, յոթ կանայք, յոթ քույրեր, յոթ թզուկներ, յոթ այծոռներ, յոթ սեղաններ, յոթ ափսեներ* և այդպես շարունակ:

Այսպիսով, ազգային նշանակություն ունեցող այս ժանրը՝ հեքիաթը, կարծես գեղեցիկ հյուսված էթնոկենսագրություն լինի, որն իր տար-

բեր մշակույթների կրող ընթերցողների դատին է հանձնվում՝ մշակութային առանձնահատկությունը լուսաբանելու ցանկությամբ։ Միննույն ժամանակ, պետք չէ անտեսել այն փաստը, որ նույն հեքիաթի նմանատիպ վերլուծական ուսումնասիրությունն ամբողջությամբ բավարար չէ միջմշակութային հարաբերություններն ու ազգային փոխընկալումը լիովին արտահայտելու համար, համենայն դեպս, բազմաշերտ վերլուծության միջոցով ավելի հեշտ ենք կարողանում ճանաչել այս կամ այն ազգին բնորոշ մտածելակերպը, համամարդկային ու ազգային առանձնահատկությունները։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աղայան Ղ.** (2005) *Ժողովրդական հեքիաթներ*, «Հայպետ» հրատ., Երևան։
2. **Ղանալանյան Ա.** (1977) *Հայ ժողովրդական հեքիաթներ*, Հովսեփ Օրբելի, «ՍՍՀ ԳԱ» հրատ., Երևան։
3. **Ջիվանյան Ա.** (2010) *Ոսկե դիվան հեքիաթագիտական հանդես*, «Ասողիկ» հրատ., Երևան։
4. **Courtés J.** (2006) *Introduction à la sémiotique narrative et discursive*, Édition Hachette Université, Paris.
5. **Ducrot O.** (1998) *Analyse sémantique*, Édition Nathan, Paris.
6. **Michèle M.** (2010) *Ute HEIDMANN, Jean-Michel ADAM, Textualité et intertextualité des contes, Perrault, Apulée, La Fontaine, L'héritier* Paris, Editions classiques Garnier.
7. **Millogo L.** (2009) *Introduction à la lecture sémiotique*, Édition L'Harmattan, Paris.
8. **Propp V.** (2005) *Les racines historiques du conte populaires*, traduit du russe par Lise Gruel Apert, préface de Daniel Fabre et Jean-Claude Schmitt, Gallimard.
9. **Tenèze M. L.** (2010) *À la mémoire de Paul Delarue / Le conte populaire français*, Arts et traditions populaires, Catalogue-Larousse, Nice.

ՄԽԻԹԱՐՅԱՆ Ն. Յու.

*Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան*

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԱՅԻ ՄԻՋՈՑՈՎ

ABSTRACT

THE FORMATION OF STUDENTS' AESTHETIC THINKING THROUGH COMPUTER GRAPHICS.

The process of learning by computer graphics helps to enhance students' educational and aesthetic perception. Studying through computer graphics stimulates the process of learning as well as develops certain aesthetic sense. Due to this, the latter forms social and aesthetic criteria.

Key words: *computer graphics, design, combination, aesthetic education, art education, animation, composition, drawing, Information technology.*

РЕЗЮМЕ

ФОРМИРОВАНИЕ ЭСТЕТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ СТУДЕНТОВ ПОСРЕДСТВОМ КОМПЬЮТЕРНОЙ ГРАФИКИ

Процесс обучения компьютерной графике способствует повышению образовательного уровня и эстетического восприятия. Обучение компьютерной графике стимулирует образовательный процесс и развивает эстетическое восприятие действительности, что, в свою очередь, формирует эстетические критерии общества.

Ключевые слова: *компьютерная графика, дизайн, сочетание, графический, эстетическое воспитание, художественное образование, анимация, композиция, рисунок, информационные технологии.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Համակարգչային գրաֆիկայի ուսումնական գործընթացը նպաստում է ուսանողի կրթական, մասնագիտական, ստեղծագործական որակի և գեղագիտական ճաշակի ձևավորման զարգացմանը: Համակարգչային գրաֆիկան օգնում է ուսումնական գործընթացում ուսանողի մոտ զարգացնել գեղագիտական ճաշակը: Արդյունքում, վերջինս իր հերթին, ձևավորում է հասարակության գեղագիտական չափանիշները:

Բանալի բառեր – *համակարգչային գրաֆիկա, դիզայն, համակցություն, գրաֆիկական, գեղագիտական դաստիարակություն, գեղարվեստական կրթություն, անիմացիա, հորինվածք, գծանկար, տեղեկատվական տեխնոլոգիաներ:*

Կրթության ոլորտներում սովորողների գեղագիտական դաստիարակության հիմնախնդիրը դարձել է կարևոր և առաջնային: Այն կրթական տարբեր ատյաններում քննարկվող հիմնահարցերի և հասարակության նոր անդամի կրթադաստիարակչական մակարդակի բարձրացման գաղափարի արտահայտությունն է: Կրթության պահանջներն ու որակները բարելավելու համար գեղագիտական դաստիարակության գործընթացը կարիք ունի որոշակի բարեփոխումների, նորագույն եղանակների ու տեխնոլոգիական հնարավորությունների կիրառման:

Սովորողների գեղագիտական մտածողության ձևավորումը պայմանավորված է մի շարք խնդիրների լուծմամբ, որը կիրականացվի գիտելիքների ձեռքբերմամբ, ունակությունների և հմտությունների կիրառմամբ, ինչպես նաև գեղագիտական մտածողության ձևավորման գործընթացով:

Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ ուսանողների գեղագիտական մտածողության ձևավորման վրա արդյունավետ ազդեցություն ունի տարբեր ոլորտներին վերաբերվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների համաձույլ կիրառումը, որը հնարավոր է իրականացնել «Համակարգչային գրաֆիկա» դասընթացի միջոցով:

Գեղագիտական մտածողության զարգացումը կարևորող ուսումնասիրություններն ու հիմնախնդիրները դիտարկվում են համակարգչային գրաֆիկայի, կերպարվեստի, գեղարվեստական նախագծման, ինֆորմատիկայի դասընթացների հետ ինտեգրացման տեսանկյունից:

Գեղագիտական մտածողության զարգացմանը նպաստող ժամանակակից տեխնիկա – տեխնոլոգիաների և մեթոդների առկայությունը, անհրաժեշտություն է ստեղծում ուսումնասիրել «Համակարգչային գրաֆիկան որպես ուսանողների գեղագիտական մտածողության զարգացման միջոց» թեման: Կիրառելով «Համակարգչային գրաֆիկա» առարկայի դասավանդման բնագավառում ձեռք բերած նորագույն փորձը անհրաժեշտ է մշակել ուրույն ձևատեսություն, մանկավարժական տեսանկյունից հիմնավորելով ուսանողների գեղագիտական մտածողության ձևավորման ուղղությամբ կիրառվող մեթոդիկայի արդյունավետությունը, առանձնացնել և ընդգծել հետագա զարգացումների կարևորությունը և հիմնախնդիրները:

Մի շարք գիտամեթոդական աշխատություններում բացահայտված են ուսումնական գործընթացներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման արդիականության և նպատակահարմարության ուղիները: Դրանց շարքում առաջնահերթ կարևորություն ունի ուսանողների ընդհանուր տեխնիկական նախապատրաստվածությունը, որոնք համապատասխանում են հասարակության պահանջներին, և տեղեկատվական հնարավորությունների պայմաններում ապահովում են ուսանողների բարձր ակտիվությունը, ուսուցման արդյունավետությունը: Կրթության համար համակարգչային տեխնոլոգիայի նշանակությունը պայմանավորված է նաև նրանով, որ հասարակական պահանջմունքների ակտիվ տեղեկատվացումը համանման գործընթաց է առաջադրում կրթության ոլորտին: Ուսումնական գործընթացում համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը և ուսուցման արդյունավետության որակավորումը հիմնավորում է համակարգչի կարևորությունը:

Ուսումնական գործընթացի մեջ անհատական համակարգիչների առկայությունը պահանջում է ուսուցչի մանկավարժական բարձր վարպետություն, այդ բնագավառում սովորողների տեխնիկական մտածողության ձևավորմանն ու զարգացմանն ուղղված որոշակի մանկավարժական մեթոդի մշակում: Ուսուցման մեջ համակարգիչների կիրառումը կարելի է դիտարկել մի կողմից որպես համակարգայնացման ընդհանուր գործընթաց, մյուս կողմից որպես ուսուցման արդյունավետ միջոց:

Մանկավարժների ու հոգեբանների կարծիքով տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները հզոր միջոց են մտածողության ձևավորման, ստեղծագործական ունակությունների զարգացման գործում, որն ակներև առավելություն ունի մյուս բոլոր ավանդական միջոցների նկատմամբ:

Համակարգչային ուսուցումը ոչ միայն նոր տեխնոլոգիաների օգտագործման միջոց է, այլ որպես տեղեկատվություն ստանալու գործիք: Ընդ որում ընդգծվում է, որ եթե հայրենական հետազոտություններում հիմնական ուշադրությունն ավանդաբար հատկացվում է մանկավարժական տեսանկյանը, համակարգչային տեխնոլոգիաները որպես ուսուցման միջոց, ապա արտասահմանյան փորձում, ըստ Ե. Ֆիլիմոնովայի, որոշակիորեն հակում է դիտվում դեպի տեխնոլոգիական ուղղվածությունը, որում համակարգչային տեխնոլոգիաները համարվում են հիմնականում որպես լրացուցիչ գործիք (Филимонова, 2009):

Կան մանկավարժական ծրագրային միջոցներ, որոնք կապ են ստեղծում համակարգչի ու անհատի գործունեության և զարգացման միջև: Այդ միջոցների տակ պետք է հասկանալ որոշ կիրառական ծրագրեր, որոնք նախատեսված են օգտվողի և համակարգչի միջև ուսումնական երկկողմանի կազմակերպելու և դրան աջակցելու համար, այն հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքում ձեռք բերել տեղեկատվություն և ուղղվածություն՝ հաշվի առնելով ուսանողի անհատական հնարավորությունները և նախընտրությունները: Ման-

կավարժական ծրագրային միջոցները ստեղծվում և օգտագործվում են որոշակի նպատակների հասնելու համար, դրանք ներառում են ուսումնական ծրագրային թեմա, որը պետք է յուրացվի ուսանողի կողմից տվյալ նյութի հաջորդական ուսումնասիրման համար:

Այս նպատակի իրագործումը պահանջում է ուսանողների գեղագիտական մտածողության հոգեբանամանկավարժական պայմանների ուսումնասիրություն, մանկավարժական հմտությունների բացահայտում, «Համակարգչային գրաֆիկա» դասընթացի նոր համակարգի մշակում:

«Համակարգչային գրաֆիկա» դասընթացը բուհական շրջանակներում ուսանողների գեղագիտական մտածողության զարգացման համար կստեղծի նոր հնարավորություններ, իսկ համապատասխան գործառնական դաշտի ձևավորումը թույլ կտա տարաբնույթ խնդիրների լուծման համալիր գործունեության ստեղծում, կբարձրացնի ընդհանուր հետաքրքրություն ուսման և մասնագիտության նկատմամբ:

Համակարգչային գրաֆիկային վերաբերվող տեսական վերլուծությունները, մանկավարժական գիտավորձի կազմակերպումը, թեստավորման և հարցադրման մեթոդներով հետազոտություններն ու հոգեբանամանկավարժական ուսումնասիրությունները պահանջում են ստեղծել նպաստավոր պայմաններ և «Համակարգչային գրաֆիկա» դասընթացի միջոցով մշակել ուսանողների գեղագիտական մտածողության զարգացման մեթոդական համակարգ, որտեղ «Համակարգչային գրաֆիկա» դասընթացը պետք է ծառայի որպես գեղագիտական մտածողության ձևավորման և զարգացման հիմք, ինչն անշուշտ մեթոդական նոր ցուցումների նախապատրաստման նախապայման է:

Համակարգչային գրաֆիկայի միջոցները ներդաշնակ են դարձնում ուսանողների հոգևոր և ստեղծագործական հնարավորությունները, որոնք զարգացնում են գեղեցիկն ընկալելու ունակությունները, գեղեցկության կանոններով արարելու հնարավորությունները: Համակարգչային գրաֆիկայի կիրառման հաջորդ քայլն ուղղված է լինելու այն միջոցների գործառնական հնարավորությունների բացահայտմանը,

որոնք ներագրում են ուսանողների գեղագիտական կարողությունների զարգացման վրա:

Համակարգչային գրաֆիկայի կիրառումը և ստացած գիտելիքների բազան կհարստացնի ուսանողների աշխարհընկալումը, ստեղծագործական կարողությունները, նրանց գեղարվեստաճանաչողական հետաքրքրությունները, կընդլայնի գեղագիտական դաստիարակության շրջանակները: Այս խնդիրների իրականացման համար անհրաժեշտ է դառնում մշակել գեղագիտական մտածողության և գեղարվեստական կարողությունների զարգացումն ապահովող մի համակարգ, որի դրույթները կարող են նպաստել հանրակրթական առարկաների դասավանդման բարելավմանը:

Իրականության ու արվեստի հանդեպ ուսանողների գեղագիտական վերաբերմունքը միշտ ուղեկցվում է հուզագգացմունքային փոխազդեցությամբ՝ արտահայտելով նրանց հոգևոր աշխարհը: Ըստ Պ. Յակոբսոնի, գեղագիտական զգացմունքները սուբյեկտի նկատմամբ բնութագրվում են ապրումներով (Якобсон, 2008):

Ուսանողները պետք է ոչ միայն ճիշտ ընկալեն և գնահատեն գեղեցիկը, այլև պարտավոր են գեղեցկության օրենքներով դրսևորել իրենց հետաքրքրող գործունեությունը:

Վ. Կուզինը դիտարկում է գեղագիտական կարողության հետևյալ բաղկացուցիչները՝ դերասանական, գեղարվեստական ունակություններ, տեսողական հիշողություն, մտավոր կարողություններ և այլն: Ուսանողների գեղագիտական մտածողության ձևավորման գործում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գեղարվեստական և ստեղծագործական կարողությունների ձևավորմանը, համակարգչային գրաֆիկայի ուսուցմանը համարժեք միջոցների, ձևերի և մեթոդների կիրառմանը (Кюзин, 1976):

Բարձրագույն ուսումնական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքը ուսանողների գեղագիտական հատկանիշները դարձնում է առավել բազմազան, կայուն և մասնագիտորեն կողմնորոշված: Արվեստի և համակարգչային գրաֆիկայի միջոցով ակ-

տիվանում է նրանց ճանաչողական ընկալունակությունը, գեղարվեստական ինքնագործունեությունը: Իրականության և գեղեցիկի հետագա գիտակցման հետ կապված գեղագիտական զգացմունքները ձևավորում են բարձր որակական հատկանիշներ և ստեղծում կայուն արժեհամակարգ:

Ուսանողի գեղագիտական մտածողության զարգացումը նպաստակաուղղված գործընթաց է: Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքում ուսանողի ունեցած գեղագիտական հատկանիշների ոլորտը ընդլայնվում և դառնում է առավել կայուն, մասնագիտորեն հիմնավորված ըստ առաջարկված նոր և ժամանակակից տեխնոլոգիաների ու գիտությունների ներգրավման ու կիրառման միջոցով: Համակարգչային գրաֆիկայի միջոցով հնարավոր է կատարելագործել և ընդլայնել գեղագիտական աշխարհայացքը հիմնավորելով վերը նշվածը:

Գրաֆիկական միջոցներով մարմնավորված համակարգչային պատկերը կարելի է գնահատել որպես ուսանողի գեղագիտական որակների դրսևորում, որն էլ այսօրվա պահանջներին համապատասխանող միջոց է և առաջարկվում է տարբեր բնագավառներում, տարբեր գործընթացներ կազմակերպելու համար:

Համակարգչային գրաֆիկան իր տարբեր հնարավորությունների դրսևորմամբ՝ ողջ հոգևոր և ստեղծագործական հնարավորություններով, գեղագիտական մտածողության ձևավորման էությունը դարձնում է ներդաշնակ: Ուսանողների գեղագիտական մտածողության ձևավորման գործընթացում համակարգչային գրաֆիկայի դերի որոշման համար հարկավոր է հաշվի առնել ժամանակակից պայմաններում համակարգչային տեխնոլոգիաների գործառույթները:

Սովորողների գեղագիտական որակների ձևավորման վրա ներգործող համակարգչային գրաֆիկայի միջոցներին են վերաբերում ուսուցման և մասնագիտական գործունեության հնարավորությունները: Այդ միջոցների օգնությամբ սովորողների մոտ ձևավորվում են գեղարվեստական երևակայություն, տեսողական հիշողություն, տարածական պատկերացումներ, գեղարվեստական ընդունակություններ,

գեղագիտական ճաշակ, գեղագիտական պահանջմունքներ, ինչպես նաև գեղագիտական այլ որակներ: Դա էլ իր հերթին պահանջում է սովորողներին ուսուցանել կերպարվեստի գրագիտության հիմունքները, նրանց մոտ ձևավորել համակարգչային նկարի արտահայտչական միջոցներից օգտվելու ունակություններ:

Հաշվի առնելով այս ամենը գեղագիտական որակների ձևավորման համար անհրաժեշտ է դառնում ուսումնական գործընթացում ուսանողներին հաղորդակից դարձնել համակարգչային գրաֆիկայի կարևորությունը, համակարգչային գրաֆիկայի միջոցների օգտագործման հրատապությանն ու հուսալիությանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կուրազյան Օ. Է.** (2001) «Գեղարվեստական նախագծում առարկայի դասվանդման հիմնախնդիրը բուհական համակարգում»: Մանկավարժական գիտությունների թեկնածուի ատենախոսություն, Երևան:
2. **Մուկոյան Հ. Ս.** (2010) «Սովորողների գեղարվեստական հետաքրքրությունների ձևավորումը համակարգչային դիզայնի ուսուցման գործընթացում»: Մանկավարժական գիտությունների թեկնածուի ատենախոսություն, Երևան:
3. **Игнатьев Е. И.** (2007) «Психология изобразительной деятельности детей». 2-е изд.
4. **Игнатьев Е. И.** (2007) «Теория и практика развития изобразительной деятельности детей» Автореферат диссертации на соискание ученой степени доктора педагогических наук Москва.
5. **Кузин В. С.** (1980) «Изобразительное искусство», М.
6. **Кузин В. С.** (1976) «Психология живописи» Учебное пособие для ВУЗов, Издательство «Оникс».
7. **Ковешникова Е. Н.** (2000) «Теория и методика художественного профессионального образования». На материале подготовки дизайнеров. Автор дис. докт. пед. наук. М.
8. **Филимонова Е. В.** (2009) «Информационные технологии в профессиональной деятельности» издательство "Феникс".
9. **Якобсон П. М.** (2008) «Эстетика и теория искусства XX века», Хрестоматия.

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ESP ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ABSTRACT

THE PECULIARITIES OF THE SELECTION AND TEACHING OF LEGAL ENGLISH VOCABULARY IN ESP CLASS

The article focuses on some of the challenges of the selection of law vocabulary in ESP courses considering the peculiarities of both the usage and legal concepts of law terms. The effort to update legal English by future legal professionals using collocations, law terms, as well as every day law vocabulary is highlighted.

In addition, the teaching style, teaching aids, and students' genuine motivation to improve legal English are targeted and analyzed within an ESP academic environment.

Key words: *law vocabulary, legal concepts, terms, teaching style.*

РЕЗЮМЕ

ОСОБЕННОСТИ ОТБОРА И ПРЕПОДАВАНИЯ ЮРИДИЧЕСКОЙ ЛЕКСИКИ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА ПРИ ОБУЧЕНИИ ЯЗЫКА ДЛЯ СПЕЦИАЛЬНЫХ ЦЕЛЕЙ

Отбор юридической лексики в учебных целях предполагает учет особенностей узуса не только терминов, но и юридической концептосферы. Следовательно, будущие юристы должны изучать не только термины и сочетания терминов в области юриспруденции, но и слова и словосочетания, которые используются в повседневной лексике юристов.

Не менее важным представляются условия обучения юридической лексике, таких как эмоциональное поле обучения, учебно-методические комплекты, познавательные мотивы и т.д.

Ключевые слова: *юридическая лексика, концепты, термины, особенности преподавания.*

ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն հոդվածի շրջանակներում փորձ է արվում դիտարկել իրավաբանական բառապաշարի ընտրության և դասավանդման որոշ առանձնահատկությունները ESP դասընթացում: Կարևորվում է իրավաբանական բառապաշարի ուսուցման հասկացության մոտեցումը:

Բանալի բառեր – *իրավաբանական բառապաշար, հասկացույթ, եզրույթ, բառապաշարի ուսուցում:*

ESP դասընթացում իրավաբանական բառապաշարի ուսուցումը կազմակերպելիս անհրաժեշտ է հաշվի առնել իրավաբանական լեզվի կամ իրավունքի լեզվի (legal language, language of law, legalese) առանձնահատկությունները: Այն աչքի է ընկնում իրավաբանական ենթալեզվին բնորոշ բառային, քերականական և ոճական առանձնահատկություններով: Ըստ Ե. Շեյգալի՝ «իրավաբանական լեզուն» նշանաբանական համապարփակ համակարգ է» (Шейгал, 2000: 22): Ըստ այդմ, անգլերեն իրավական, իրավաբանական կամ իրավունքի ենթալեզուն անհրաժեշտ է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից՝ իմաստաբանական, գործաբանական, նշանաբանական, ճանաչողական և այլն:

Գիտնականներն իրավաբանական բառապաշարը դասակարգում են ըստ մասնագիտական եզրույթների բնույթի՝

- ընդհանուր օգտագործման բառապաշար (e.g. agreement, sentence, case, to win, to lose, decision, to break),
- իրավաբանական բառապաշար, որը թարգմանվում է լրիվ կամ մասնակի պատճենմամբ (e.g. precedent, barrister, solicitor),
- իրավաբանական բառապաշար, որը չի պատճենվում (e.g. peremptory challenge, challenge for cause, common sense).

Ընդհանուր օգտագործման բառապաշարը բաժանվում է եւս երկու խմբի՝ ավելի հաճախակի գործածվող բառապաշար (to govern, to classify into) և հազվադեպ հանդիպող բառապաշար (to abrogate, to adjourn, to defer):

Ըստ Ս. Խիժնյակի իրավաբանական եզրույթը պետք է լինի միասնական, այսինքն՝ պետք է գործածվի տվյալ օրենքում կամ նորմատիվ ակտում նույն իմաստով և պետք է լինի մենիմաստ նույն համակարգի շրջանակներում, ընդունված բոլորի կողմից, կայուն, այսինքն՝ նրա իմաստն ու նշանակությունը չպետք է փոփոխվեն. անկախ ենթատեքստից՝ տրամաբանորեն կապակցված այլ համակարգի տերմինների հետ պետք է վերաբերի դրա կիրառման մասնագիտական ոլորտին (Хижняк, 1997: 56):

Դ. Միլոսլավսկայան տալիս է իրավաբանական եզրույթների հետևյալ դասակարգումը՝

1. ընդհանուր գործածական,
2. ընդհանուր գործածական եզրույթներ, որոնք նորմատիվ ակտում ավելի նեղ, հատուկ նշանակություն ունեն,
3. բուն իրավաբանական,
4. տեխնիկական (Милославская, 2000: 123):

Անգլերեն իրավաբանական եզրութային համակարգը ձևավորվել է հիմնականում լատիներենի ազդեցությամբ: Դա է պատճառներից մեկը, որ աստիճանաբար անգլերենի իրավական եզրութաբանական համակարգը բաժանվել է ընդհանուր լեզվից և մատչելի է միայն մասնագետներին: Լեզվաբանները նշում են, որ իրավաբանական լատինական փոխառությունները մինչև հիմա էլ մեծ դեր են խաղում անգլերեն իրավաբանական ենթալեզվի գործառական համակարգում:

Իրավաբանական եզրութների ևս մի առանձնահատկություն է առանձնացնում Ա. Հարությունյանը: Նշելով, որ ընդհանուր առմամբ, իրավաբանական եզրութներին բնորոշ է բազմիմաստությունը: Բազմիմաստության երևույթը ավելի շուտ նորմ է, քան բացառություն իրավաբանական ենթալեզվում: Որպես օրինակ դիտարկենք լատինական *jus civile* բառակապակցությունը և դրա տարբերակները ժամանակակից լեզուներում: *Jus civile* եզրույթը ունեցել է մի քանի իմաստ, որոնց իմաստային նրբերանգները երկու հազարամյակի ընթացքում մասամբ փոխձածկում են միմյանց: Հին Հռոմում սույն եզրույթը վերաբերում էր դա-

սական հռոմեական իրավունքին, իսկ Բյուզանդիայում և միջնադարյան Եվրոպայում *jus civile* եզրույթն առնչվում էր հռոմեական իրավունքին և ավելի լայն իմաստով աշխարհիկ պետական իրավունքին՝ ի հակադրություն աստվածային իրավունքի (*jus divinum*) կամ բնական իրավունքի (*jus naturae, jus naturale*): Այնուհետև զարգանում է քաղաքացիական իրավունքի ժամանակակից իմաստը: Սովորական բազմիմաստության դեպքում իրավաբանական եզրույթն ունի երկու կամ ավելի կապակցված իմաստ, որը շատ տարածված է իրավագիտական ենթալեզվում: Դրանցից են՝ *government, jurisdiction, law* և այլ եզրույթները: Կարելի է պարզ պատկերացնել, որ ողջ արտահայտության իմաստն առավելապես կախված կլինի դրանց նշանակությունից:

Հոմանիշությունը բազմիմաստության հակառակ երևույթն է, որտեղ երկու կամ ավելի եզրույթ արտահայտում են միևնույն հասկացությունը: Ըստ լեզվաբանների՝ հոմանիշությունը իրավաբանական ենթալեզվին բնորոշ նույնպես բավական տարածված հատկանիշ է:

Հոմանիշությունը ոչ այնքան հարստացնում է իրավաբանական անգլերենը, որքան հավելյալ խնդիրներ է հարուցում: Օրինակ՝ *cite* և *quote* հոմանիշ տերմինները: Քանի որ անգլոամերիկյան իրավունքի համար նախադեպի վկայակոչումն առաջնակարգ նշանակություն ունի, պարզ է, որ այդ բայերի ճիշտ կիրառումից շատ բան է կախված: Դրա համար խիստ կարևոր է հիշել, որ “to cite an authority is to give its substance and to indicate where it can be found”, այն դեպքում, երբ “to quote is to repeat someone’s exact words and to enclose them in quotation marks”:

Անգամ այնպիսի հասարակ բառերի կիրառությունը, ինչպիսիք են «դատավոր» նշանակող *judge* և *justice* բառերը, կարգավորվում է խիստ կանոններով, որոնց չհետևելը ենթակա է տիպիկ հետևանքների: Միացյալ Նահանգներում, օրինակ՝ *Justice* բառով կոչում են միայն այն դատավորներին, որոնք նստում են վերին ատյանի դատարաններում, որպես կանոն՝ Գերագույն դատարանում (բառը պարտադիր գրվում է մեծատառով, անգամ եթե չի նշվում դատավորի անունը), և *judge* բա-

ռով՝ մնացած դատավորներին: Անգլիայի Գերագույն դատարանում, որը բաղկացած է երեք առանձին դատարաններից (Վերին դատարան, Գերագույն քրեական դատարան և Վճռաբեկ դատարան), նստում են judges, ստորին աստիճանի՝ Մագիստրատի դատարաններում՝ justices:

«Դատարաններ», «դատավարություն» թեման անքակտելիորեն կապված է այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են decision, opinion, judgment բառերը» (Հարությունյան, 2011: 229):

Իրավաբանական կողմնորոշման անգլերենի ուսուցման գործընթացում մեծ նշանակություն ունի հատկանունների ուսուցումը, որոնք ներկայացնում են այնպիսի լեզվական նշաններ, որոնք անբաժան են համապատասխան լեզվամշակույթից և հաղորդակցության գործընթացներից: Հատկանունները, ձեռք բերելով գործաբանական կշիռ, դառնում են բազմաբնույթ զգայական և մտավոր գնահատականներ հաղորդելու միջոց: Միջմշակութային հաղորդակցման հմտությունների զարգացման տեսանկյունից կարևորվում են իրավաբանական հատկանվանական իրոյթները, քանի որ դրանք կարելի է ներմուծել թե՛ առանձին նկարագրական մակարդակում, թե՛ համապատասխան տեքստերի միջոցով, երբ դրանց յուրացումն իրականացվում է որևէ առաջադրանքի կատարման արդյունքում կամ ընթացքում: Օրինակ՝ հետևյալ հատկանունները ներմուծվում են ծանուցումների կամ բացատրությունների միջոցով.

Old Baily - Օուլդ Բեյլի՝ կենտրոնական քրեական դատարան (Central Criminal Court): Այս տեղանունը առաջացել է համանման լոնդոնյան փողոցի անվանմամբ, որտեղ այն գտնվում է:

Miranda warning - ձերբակալվածին տեղեկացնում են նրա սահմանադրական իրավունքների մասին: Այս հատկանունը առաջացել է «Միրանդան Արիզոնա նահանգի դեմ» դատական գործից հետո (1966):

Իրավաբանական բառապաշարի ուսուցման գործընթացում յուրա-հատուկ տեղ է հատկացվում միջմշակութային լակունաների դիտարկմանը: Oxford Advanced Learner's Dictionary-ն լակունան սահմանում է այսպես. lacuna is a place, where smth is missing in a piece of writing or in

an idea, a theory, etc. Այս բացատրությունն իրոք իր հիմնավորումն է գտել իրավաբանական անգլերեն ենթալեզվում: Իրավաբանական անգլերենում շատ հաճախ անգլերեն լեքսիկական միավոր հանդիսացող որևէ հասկացություն կամ բառ չունի համապատասխան լեքսիկական միավորը հայերենում, դրանով իսկ ներկայացնում է թարգմանության դժվարություն: Այս դեպքում հայերենում օգտագործվում է նկարագրական նախադասություն կամ նույնիսկ նախադասություններ լակունայի իմաստն արտահայտելու համար: Ավելին, լակունաները կրում են անգլալեզու իրավական մշակույթին բնորոշ ենթատեքստ՝ անհրաժեշտություն առաջացնելով լակունան դիտարկել անգլալեզու մշակույթի ֆոնային գիտելիքների հիմքի վրա. օր. pocket veto - գրպանի վետո, առ այն, որ ԱՄՆ-ի նախագահը հապադում է ստորագրել կոնգրեսի ընդունած օրենքի նախագիծը՝ սպասելով մինչև կոնգրեսի նստաշրջանն ավարտվի (Чиропова, 2007: 126-132); death row - մահվան շարք – բանտում բանտախցեր, որտեղ մահվան դատապարտվածները սպասում են իրենց դատավճռի կայացմանը:

Միջմշակութային հաղորդակցման հմտությունների ձևավորման տեսանկյունից կարևորվում է իրավաբանական բառապաշարի ամերիկյան և բրիտանական տարբերակների դիտարկումը:

Ի. Չիրինովան բերում է մի քանի օրինակներ, որոնց համեմատությունը ցույց է տալիս, որ իրավաբանական շատ եզրույթների և իրույթների ուսուցումը կարող է լինել արդյունավետ, եթե իրականացվում է ոչ միայն ուսանողների մայրենի, այլև անգլերեն լեզվով, քանի որ մայրենի լեզվի միջոցով հնարավոր չէ բացահայտել համեմատովոր եզրույթների բովանդակային բնութագրերը: Օրինակ՝

- արտաքին գործերի նախարարություն-State Department (USA), Foreign and Commonwealth Office (UK)
- ֆինանսների նախարարություն-Treasury Department (USA), Treasury (UK)
- արդարադատության նախարարություն-Department of Justice (USA), Department for Constitutional Affairs (UK)

- կրթության նախարարություն-Department of Education (USA), Department for Educational Skills (UK)
- Attorney General-արդարադատության նախարար (ԱՄՆ), գլխավոր դատախազ (Մեծ Բրիտանիա)

Ստուգաբանական մակարդակում նույնպես հստակորեն երևում է, թե ինչպես են բրիտանական և ամերիկյան իրավաբանական եզրույթները աստիճանաբար իմաստային առումով իրարից հեռացել: Տես՝ Black's Law Dictionary:

Իրավաբանական եզրույթների ուսուցման տեսանկյունից նույնպես հաստատվում է ասածը, առ այն, որ իրավաբանական հասկացությունների համեմատությունն անհրաժեշտ է իրականացնել անգլերեն լեզվով: Օրինակ՝ ամերիկյան տաքսոնոմիայի կամ կարգաբաշխության մեջ սեռանիշ եզրույթ է crime-ը՝ ի տարբերություն բրիտանական անգլերենի, որտեղ նույն գործառույթներն է կատարում offence եզրույթը: Ներկայացնելով Criminal offences եզրույթի իմաստային – զուգորդական դաշտը՝ կարելի է հաստատել ասվածը՝

- offences against persons (օրինակ՝ murder, manslaughter)
- offences against habitation and occupation (օրինակ՝ burglary, arson)
- offences against property (օրինակ՝ larceny)
- offences against morality and decency (օրինակ՝ adultery)
- offences against public order and government (օրինակ՝ treason)

Ըստ նույն հեղինակի՝ ամերիկյան իրավական համակարգում գոյություն ունի հանցագործությունների դասակարգում՝ ըստ հանցանք կատարելու ծանրության աստիճանի, համաձայն որի՝ crime-ն ունի սեռային անվանում, որը տարբերակվում է տառային ցուցիչներով՝ օրինակ՝ A, B, C,

A felony, B felony, C felony և A misdemeanour, B misdemeanour, C misdemeanour: Այդպիսի դասակարգում անգլիական քրեական իրավունքում գոյություն չի ունեցել և չունի:

Այդ բնույթի դժվարություններն առաջանում են հատկապես անգլերենից հայերեն թարգմանության ժամանակ, քանի որ մի կողմից՝ մենք գործ ունենք տարբեր իրավական մշակույթների հետ, մյուս կողմից՝ խորհրդային շրջանից մենք ժառանգել ենք անգլո-ամերիկյան իրավական եզրույթները, իրույթները, հասկացությունները և հասկացույթները միջնորդավորված՝ հիմնականում ռուսերենի միջոցով ուսումնասիրելու և յուրացնելու մոտեցումը: Դա բացատրվում է նախ և առաջ նրանով, որ Հայաստանը գտնվում էր ռուսերենը պետական լեզու ընդունած ԽՍՀՄ-ի իրավական տարածքում (Чирочова, 2007, 126-132):

Ակնհայտ է, որ առանց ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշարի աստիճանական յուրացման հնարավոր չէ իրականացնել շփում թե՛ առօրյա - խոսակցական, թե՛ մասնագիտական մակարդակներում: Ավանդաբար, նշված բառապաշարի յուրացումն իրականացվել է գեղարվեստական գրականության, պարբերական մամուլի ընթերցանությամբ, բնագրային ֆիլմերի դիտմամբ և այլն:

Օտար լեզու ուսումնասիրող ուսանողները պետք է գիտենան, որ ազգամշակութային նշութավորում ունեցող բառապաշարն ունի վառ արտահայտված ազգամշակութային իմաստաբանություն: Դրանք են.

- մի մշակույթում գոյություն ունեցող, զուգադրվող մշակույթում գոյություն չունեցող առարկաներն ու երևույթները,
- հարանշանակային բառապաշար ներկայացնող իրույթները, որոնք համընկնում են հիմնական նշանակությամբ, սակայն տարբերվում են մշակութային-պատմական զուգորդումներով,
- ֆոնային բառապաշար ներկայացնող իրույթները, որոնք համեմատվող մշակույթում ունեն նմանություն, բայց տարբերվում են որոշակի ազգամշակութային հատկանիշներով:

Իրույթների ուսուցման հիմնական նպատակներից մեկն այն է, որ դրանք ունեն ազգամշակութային երանգավորում, այսինքն՝ ներկայացնում են տվյալ դարաշրջանի, անձի, տարածաշրջանի, երևույթի առանձնահատկությունների ամբողջությունը: Ինչպես նշում է Գ. Տոմախինը. «Հենց երանգավորումն է չեզոք, «չերանգավորված» միավորները

դարձնում «ազգային երանգավորում» ունեցող իրություններ» (Томахин, 1981: 64-69):

Միջմշակութային լակունաների օրինակներ են “common law” «ընդհանուր իրավունք», “equity” «արդարության իրավունք», “Inns of court” «փաստաբանների միություն», “barrister” «դատական փաստաբան», “solicitor” « խորհրդատու փաստաբան» հասկացությունները:

Իրավաբանական խոսույթը ներառում է մեծ քանակությամբ ասույթներ, ասացվածքներ, իդիոմատիկ արտահայտություններ, որոնք իրավամբ ներկայացնում են անգլալեզու իրավական մշակույթի, ավանդույթների և իմաստության ամբողջությունը, օրինակ՝

“Once a thief, always a thief”,

“The law is not the same at morning and at night”, etc. (Dictionary of proverbs, books, google.am/books/id)

Իրավաբանական անգլերենի նվազագույն բառապաշարի ընտրությունն իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ ոլորտին վերաբերող հիմնական հասկացությունները և գերհասկացությունները, այսինքն՝ հասկացությունների ոլորտը (կոնցեպտուալություն): Վերջին շրջանում արդյունավետ մեթոդ է գերհասկացությունների և հասկացությունների աստիճանական յուրացման տվյալ բառապաշարի ուսուցման կազմակերպումը:

Ակնառու օրինակ կարող է լինել «օրենք» գերհասկացության կոնցեպտուալորտի յուրացման ընթացակարգերի մշակման փորձը: Ն. Կովալևան ուսումնասիրել է նշված գերհասկացությամբ՝ վերլուծելով Ջ. Գրի-հեմի և Ս. Տուրոույի ստեղծագործությունները, որոնցում տեղ են գտել նշված գերհասկացության վերաբերող հասկացությունները: Ըստ նույն հեղինակի՝ “law” գերհասկացությամբ կազմված է հետևյալ հասկացություններից՝ “law”, “justice”, “right”, “innocence”, “guilt”, “conviction”, “indictment”, “evidence”, “crime”, “punishment”, “case”, “appeal”, “pardon”, “divorce”, իսկ Ս. Տուրոուի ստեղծագործություններում ավելի հաճախակի են հանդիպում հետևյալ հասկացությունները՝ “law”, “case”, “justice”, “right”,

“innocence”, “guilt”, “indictment”, “evidence”, “crime”, “appeal”, “witness” (Ковалева, 2008):

Ուսուցման կարևոր փուլ է այդ հասկացությունների վերարտադրողական խոսքի սերումը, տարբեր իրավաբանական խոսույթների ստեղծումը ESP դասընթացի շրջանակներում:

Այսպիսով, անգլերենի իրավաբանական բառապաշարի զարգացման արդյունավետ աղբյուր կարող է լինել նշված և այլ անգլալեզու, դատաիրավական թեմաներով գրող հեղինակների որոշ ստեղծագործությունների ընթերցումը: Օրինակ՝ Scott Turow “Personal Injuries” (1999), John Grisham “The Client” (1993) , “The Street Lawyer” (1998) etc.

Իրավաբանական անգլերեն ենթալեզուն բազմաշերտ է: Ավանդական մոտեցմամբ առաջնային էր համարվում իրավաբանական, իրավական եզրույթների ուսուցումը: Սակայն ակնհայտ է, որ միայն իրավական եզրույթների ուսուցումը, յուրացումը չի կարող ապահովել օտարալեզու հաղորդակցություն, քանի որ մասնագիտական բառապաշարը միայն եզրույթներով չի սահմանափակվում:

Անհրաժեշտ է իրավաբանական ենթալեզվի բառապաշարն ընտրելիս հաշվի առնել ոչ միայն անգլերեն լեզվում իրավական ոլորտին վերաբերող անգլերեն լեզվում ընդունված հասկացությունները և հասկացությունները, այլև դրանց այն հայերեն համարժեքները, որոնք գործածվում են առօրյա-խոսակցական և գիտական – հրապարակախոսական ոճերում: Դա կարևոր է, քանի որ մշակութային բնույթի փոխներթափանցումը հնարավոր է հաղթահարել, երբ ուսանողները ծանոթանում են և՛ իրենց, և՛ լեզվակիրների ազգամշակութային կարծրատիպերին: Հայտնի է, որ տարբեր լեզուների հասկացութային դաշտերը զուգորդական մակարդակում տարբերվում են, այսինքն՝ նույն բառը կամ եզրույթը զուգորդվում է տարբեր բառերի հետ:

Հասկացութային մոտեցումը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել իրավաբանական բառապաշարը կոնկրետ հասկացությունների զուգորդական դաշտի մերձակա և հեռակա տիրույթներում տվյալ բառի

միջուկի հիմնանշանակային “denotative”, նշանակական “significative”, հարանշանակային “connotative” և գործաբանական մակարդակներում:

Այսպիսով, իրավաբանական ենթալեզվի բառապաշարն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն իրավական եզրույթները, այլև հասկացությունները և հասկացությունները, որոնք գործածվում են առօրյա - խոսակցական և գիտական - հրապարակախոսական ոճերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Հարությունյան Ա. Ա.** (2014) Ժամանակակից իրավագիտական ենթալեզվի առանձնահատկությունները իմաստաբանության համատեքստում//Լրաբեր հասարակագիտական գիտությունների. N 4, էջ 222-231
2. **Նազարյան Ա. Հ.** (1993) Լեզվաբանական տերմինների Ֆրանսերեն-ռուսերեն-հայերեն ուսումնական բառարան, Եր. Ապոլոն, 656 էջ., 355:
3. **Ковалева Н. В.** (2008) Общее и индивидуальное в вербализации супраконцепта, law (на материале произведений авторов юристов Дж. Гришэма и С. Туроу). Материалы докладов 15 Международной конференции студентов, аспирантов и молодых ученых, Ломоносов. М., Изд-во МГУ, Социально-политическая Мысль, 2008. – С.23-34.
4. **Милославская Д. И.** (2000) Типовые трудности семантической интерпретации юридического текста. – В сб.: Русский язык в его естественном и юридическом бытии. - Барнаул: Изд-во АГУ, 272 с.
5. **Хижняк С. П.** (1997) Англо-американская и русская терминология права: социо-лингвистический аспект возникновения и развития. - Саратов: СГАП, 78с.
6. **Хижняк С. П.** (1997) Юридическая терминология: формирование и состав.- Саратов, 137с.
7. **Чиронova И. И.** (2007) Сопоставительный анализ юридических терминов в английском и русском языках: возможности и перспективы. Вопросы филологических наук, № 6 (29). – С.126-132.
8. **Шейгал Е. И.** (2000) Семиотика политического дискурса: Монография / Ин-т языкознания РАН; Волгогр. гос. пед. ун-т. – Волгоград: Перемена, 368 с.
9. **Шилихина К. М.** (2000) Коммуникативное давление в русском общении // Язык и социальная среда. Теоретическая и прикладная лингвистика. Воронеж, Выпуск 2. - С. 103-108.

FOREIGN LANGUAGES FOR SPECIAL PURPOSES

№ 3 (12)

Չափս՝ 60x84 ¹/₁₆: Տպ. 9,625 մամուլ:
Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

